

132

2005

-ի ՌԽՍՊՀԳԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏ

Ա. ԴՐԻԳՈՐՅԱՆ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Յ Ե Վ

ՄԵԹՈԴԻԿԱՆ 3-ՐԴ, 4-ՐԴ ԴԱՍԱՐԾՆԵՐՈՒՄ

ОБЯЗАТЕЛЬНАЯ  
ЭКЗЕМПЛЯР

5  
9-95

Инв. № 16737  
ԼՈՒՀՐԱՑ

ՁԵՐԵՎԱՆ

1940

22 MAR 2013

132

практике. Радост по природе  
беседа и мозгика со спре-  
ножалением в З-и, Ч-и км.



4085-87

Арм.

3-4598а

5

Գ-35

Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Յ ՈՒ Խ Ն Տ ա շ ե ն կ ո ւ ս կ ո ւ թ յ ո ւ ն

Մեր կուսակցությունը և կառավարությունը բազմիցս նշել են գործնական աշխատանքների նշանակությունը ու անհրաժեշտությունը դպրոցում: Կուսակցության 18-րդ համագումարում ընկ. Մոլոտովը խնդիր դրեց, վոր միջնակարգ դպրոցն ավարտողներն ապագա գործնական աշխատանքների համար վորոշ պատրաստականություն ստացած լինեն:

Այդ վարչումներից ու ցուցումներից բղխում և գործնական աշխատանքների ուսուցումը բարեկամելու պահանջը նաև տարրական դպրոցում և միջնակարգ դպրոցի ստորին գասարաններում:

Յերրորդ և չորրորդ գասարանների յերեխաների տարիքային յուրահատկությունն այն է, վոր այդ ժամանակամիջոցում նա պիելի շատ ե պատկերացումներ կուտակում և հասկացողություններ կառուցում: Յերբ յերեխան գնում է 5-րդ գասարան, նրանից պահանջվում է բնական յերեվությների պարզ հասկացողություն և փաստային հիմնական գիտելիքներ ու ճշգրիտ պատկերացում շրջապատող աշխարհի մասին:

Սակայն ուսումնասիրելով տարրական դպրոցի աշակերտների գիտելիքների վորակը՝ պարզվում է, վոր շատ հաճախ նրանք հեռու չեն գնում «խոսքի և գրքի» գիտելիքներից: Իսկ այդ բանավոր գրքային դասավանդումը կրտում է գիտությունը կյանքից և սույնալիստական շինարարությունից: Ահա այդպիսի գիտելիքների դեմ է, վոր պետք է պայքարեն բնագիտության դասատումները: Իրական, լրիվ պատկերացում բնության մասին աշակերտը կունենա այն մոմենտից, յերբ նա կգիտակցի փաստը, կծանոթանաւեալ յերեվությին, կդիտի վորեվի պրոցես:



Այս բոլորը հնարավոր ե այն դեպքում, յերբ տիսականը կապվի գործնականի հետ (փորձեր և դիտումներ դասի ժամանակ, բնության մեջ, կենդանի անկյունում, դպրոցամերձ հողամասում, հերթարիումների, կոլեկցիաների կազմում և այլն): Սակայն գործնականը պետք ե տրվի այն սահմաններում, վոր նպաստի աշակերտների ունեցած գիտելիքների ընդարձակմանն ու ամրապնդմանը, նրանց կոմունիստական դաստիարակությանը, պատրաստի մարտնչող անսատվածներ և զինի ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությամբ: Բացի այս՝ գործնական աշխատանքն ուսուցչի առաջ բաց ե անում անվերջ հնարավորություններ դաստիարակելու աշակերտների մեջ զսպվածություն, կայունություն, ճշտապահություն, աշխատասիրություն և այլն:

Անդրադառնալով յերրորդ և չորրորդ դասարանների բնագիտությունից տրվելիք գիտելիքների ծավալին՝ պետք ե ասել, վոր այն ընդգրկում ե բավական բազմազան նյութ: Աշակերտները պետք ե ձեռք բերեն կոնկրետ պատկերացումներ իրենց շրջապատող հողի, ջրի և ողի առաջացման, կազմության ու ոգտագործման մասին, պետք ե իմանան ամենատարածված տեղական բույսերի և կենդանիների մասին, պետք ե իմանան մարդու կազմությունը, մարդու և կենդանիների ներքին որդանների կառուցվածքի նմանությունն ու տարբերությունը և այլն:

Վորպեսզի այս բոլորն աշակերտները յուրացնեն, բնագիտության դասավանդման մեթոդը պետք ե լինի բազմազան: Սակայն այդ բազմազանությունը նպատակահարմար ձեզով ոգտագործելու համար ուսուցիչն ամենից առաջ պետք ե պարզ պատկերացնի դասի նպատակը, բովանդակությունը, այսինքն այն մատերիալը, վորով պետք ե ոգտվել տրված նպատակին հասնելու համար:

Յենելով ծրագրային նյութի և կոնկրետ դասի ելություն՝ 3-րդ և 4-րդ դասարաններում կարելի յե կիրառել ցուցադրական փորձ, լաբորատոր աշխատանք, դիտողությունն նկարների, խրովիւակների ու սպիրտային պրեպարատների միջոցով, եփսկուսիա և աշխատանք՝ կենդանի անկյունում ու դպրոցամերձ հողամասում և այլն:

Բնորոշենք յուրաքանչյուրն առանձին:

## 1. ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁ (ԴԵՄՈՆՏՐԱՑԻԱ)

Բնագիտության դասավանդման ժամանակ հաճախ հարկ է լինում ցուցադրական փորձի ոգնությամբ այս կամ այն բնական յերկույթը դասարանական պայմաններում վերարտադրել: Այս փորձերի նպատակն է յերկույթը մի անգամ ևս ստուգել, համոզվելու նրա իրական լինելու մեջ և, վոր զիսավորն է, տիրապետելու նրան ու ծառայեցնելու ապագա գործնական աշխատանքներին: «Մենք կարող ենք ապացուցել բնական վորեւ յերկույթի հասկացողության ճշտությունը նրանով, վոր կարողանանք ինքներս այն ստեղծել, վերարտադրել և հարկադրել նրան ծառայելու նպատակներին», — ասում է ենգելը:

3-րդ և 4-րդ դասարանների բնագիտության ծրագրային նյութն այնպիսին է, վոր գործնական աշխատանքների մեջ մասը կարելի յե ցուցադրական փորձի ոգնությամբ կատարել, ինչպես ջրի թորումը, ջրի սառեցումը, գոլորշիացումը, մարմինների ընդգարձակումը ջերմությունից, ողի բաղադրության վորոշումը, գոլորշու ուժը, փայտի չոր թորումը, կենդանիների հերձումը, գորտի մկանների աշխատանքը, ջրի բաղադրանալը բույսի ճյուղերով և այլն:

Վորպեսզի ցուցադրական փորձն ավելի յուրացնելի դարձնի տրվող մատերիալն, անհրաժեշտ է՝

1. Փորձը որգանապես կապել ծրագրային նյութի հետ և դնել այն մոմենտին, յերբ անհրաժեշտ է վերլուծել տվյալ թեման:

2. Փորձը շպիտի լինի պատահական, այլ պետք ե ունենանալ պատահակարում: Զի կարելի մտնել դասարան և ասել՝ «Հիմա կատարենք այսպիսի մի փորձ»: Այսպիսի դեպքում աշակերտները լրիվ շափով չեն կարողանան ըմբռնել փորձի ամբողջականությունն իր մանրութներով, և փորձը չի տա սպասված արդյունքը»:

3. Փորձի ժամանակ աշակերտների միտքը պետք ե կենտրոնացնել ցուցադրվող բուն յերեւոյթի և վոլ թե գործիքի արտաքին հրապուրների վրա: Փորձագրման ժամանակ պետք ե աշխատել փորձանոթները և գործիքները կառուցել ամենահասարակ ձեզով: մեծ մասամբ ոգտագործել յերեխաներին ծանոթ ափսեներ, ամաններ, բռնիշների փոխարեն գործածել հասարակ փոկ կամ լար, վորպեսզի յերեխան շգրավի անծանոթ իրերով, կամ զանազան նյութերի այրման ժամանակ առաջացող ուշագրավ ուժեղ ձայնով, փայլով, և այլն:

4. Փորձը պետք է կատարել առանց շտապիլու, բայց արել կատարվող յերեսութիւների հետևողականությունը, հաճախակի հարցնել յերեխաներին՝ պարզելու համար, թե վորքան են ըմբռնել փորձի ելությունը:

5. Յուրաքանչյուր փորձ ուսուցի կողմից պետք է նախորոք մշակված ու բնեարկված լինի, ուստի մեկից ավելի փորձ դնելը նպատակահարմար չի:

6. Փորձը պետք է տեսանելի լինի աշակերտներին ամեն կողմից: Յուցադրման ժամանակ պետք է վերցնել ավելի խոշոր գործիքներ:

7. Փորձի արդյունքները դիտելու համար՝ անհրաժեշտ է փորձանոթը մոտեցնել աշակերտներին աճիատունն :

8. Վորակեսպի փորձը հաջող անցնի, անհրաժեշտ է, վոր ուսուցիչը նախորոք կատարի այդ փորձը: Փոքրիկ անհաջողությունը կարող է բացասաբար անդրադառնալ վողջ աշխատանքի ընթացքի վրա:

9. Փորձը նախապատրաստելիս ուսուցիչը պետք է նախորոք մտածի և գրի առնի, թե ի՞նչ է հարկավոր տվյալ փորձի համար, բացի այս, պետք է ստուգի ամեն մի մանրութ, վորակեսպի բուն փորձի ժամանակ պատահանության ու դժվարության առաջ շկանգնի:

10. Յուցադրական փորձը միայն ցուցադրման բնույթ չպետք է կրի, այլ պետք է ոգնի աշակերտներին հանելու ինքնուրույն յեզրակացույքումներ: Որինակ՝ գորտը հերձելիս կնրա ներքին կազմությունը դիտելիս պետք է համեմատել մարդու և այլ կենդանիների կազմության հետ և հանել ընդհանուր յեզրակացություններ:

11. Փորձի ելությունը, փորձանոթների սարքավորումը և նրա բոլոր մասերը պետք է նախորոք բացատրել և ցուց տալ աշակերտներին, իսկ փորձը վերջացնելուց հետո պետք է կատարել ընդհանրացում՝ համարուտակի պատմել տալու, պատմելու (ուսուցչի կողմից կամ հարցերի միջոցով):

Յուցադրական լաբորատոր փորձի վերաբերյալ վերեվում նշված պահանջների լրիվ չափով կիրառումը տարրական դպրոցում՝ սերտ կապված է ամբողջ գասարանական աշխատանքների հետ, այն է՝ ուսումնական նյութի բովանդակության, դասի թեմայի,

կառուցվածքի, մանկավարժի մեթոդական գինվածության, յերեխաների պատրաստականության, յուրահատկության, ուսումնական նյութերի ու սարքավորման առկայության հետ և այլն:


Փոքր կենդանիների հերձումը ցածր դասարաններում նույնպես կիրառելի ձեվի և այն պարզ պատճառով, վոր այն ունի խոչշոր նշանակություն: Վոլ մի գեղարվեստական նկար, վոլ մի մողել, վոլ մի սպիրտային գունաթափ պրեպարատ յերեխաներին չի տա այն լրիվ ու խոր հասկացողությունը, վորքան կենդանի որյեկտը: Միմիայն թարմ հերձվող ոբյեկտի վրա յէ, վոր յերեխաներն ստանում են լրիվ պատկեր՝ կենդանու կազմության, ներքին որդանների ձեվերի, գույների և այն փոխադարձ կապի մասին, վոր ներկայացնում է վողջ որդանիզմը: Տարրական դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների համար հնարավոր է հերձել զանազան կենդանիներ՝ ձուկ, գորտ, նապաստակ, մուկ և զանազան վորդեր:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում տալ, թեև շատ համառոտակի, այդ աշխատանքի նկարագրությունը, քանի վոր մեր դպրոցներում շատ հաճախ այդ կարեվոր աշխատանքը զանց և առնվում՝ վախենալով նրա յենթագրական դժվարությունից: Թվարկված կենդանիներից շատ ավելի նպատակահարմար է հերձել գորտը, քանի վոր նրա կառուցվածքը վողնաշարավորների տիպիկ պատկերն ե տալիս, և առհասարակ հեշտ է գորտ ճարել: Գորտի հերձման դեպքում ավելի հարմար է վերցնել արուն, քանի վոր եգի մոտ, ձվերի շատ լինելու պատճառով ներքին որդանների պատկերը ավելի վատ է յերեվում:

Թումանյանի անվան դպրոցի 4-րդ և դասարանում՝ դասատում՝ «մարդու մարմնի կազմությունն ու կյանքը» անցնելիս՝ հերձեց գորտը, նպատակ ունենալով կենդանի ոբյեկտի վրա ցուց տալու ներքին որդանները՝ համեմատելով մարդու ներքին որդանների հետ: Դասն սկսվեց նախորդ թեմայի կրկնությամբ, վորտեղ մեկ անգամ ևս շեշտվեց մարդու նմանությունը կապկին: Ապա անցնելով նոր նյութի բացատրությանը, բանկայի միջից դուրս հանեց նախորդ թմրացրած կենդանուն և հայտնեց աշակերտներին, վոր գորտը վոլ թե սպանված է, այլ քլորոֆորմի ազդեցության տակ քնացրած: Գորտին հերձելու աշխատանքը կատարեց անդամահատական վամնայի մեջ (ավելի նպատակահարմար է՝ մոմեն հատակով): Հերձման համար ուներ անդամահատական դասական, բռնիչ (պինցետ), անդամահատական մկրատ, գնդասեղներ, ջուր, բա-

ժակ (առանձնացրած գործարանները վորոշ ժամանակ չըի մեջ պահելու համար):

Քնացրած կենդանուն տեղավորելով վաննայի հատակին՝ կուրծքը դեպի դուրս, ձգելով սկզբում առաջին, հետո վերջին թաթերը՝ ամրացրեց գնդասեղներով: Ամրացնելուց հետո պինցետով (կարելի յէ նաև քորոցով) բռնելով փորի մեջտեղի մաշկը (վորը յերբեք ամրացված չի լինում մարմնին՝ ձգեց ու մկրատով բաց արեց մի փոքրիկ կտրվածք: Այնուհետև հեշտությամբ այդ կտրվածքը շարունակեց դեպի վերեկվ մինչեվ գլխի ստորին մասը և դեպի ներքեվ՝ մինչեվ յետանցքը: Ապա նույն ձեվով կտրեց հորիզոնական ուղղությամբ նաև առաջին թաթերի մաշկը (տե՛ս Ն և Նկար): Այսպիսով ստացվեց մաշկի շորս կտրված կտորներ, վո-




Նկար 1.

բռնք բաց անելով յետ՝ դեպի կողքերը, նորից ամրացրեց գնդասեղով: Այդ յետ բացված մաշկի մակերեսի վրա յերեխաներին ցուց տվեց արյունատար անոթները: Ի հարկե այս գործողությունից անմիջապես հետո ներքին կառուցվածքը դեռևս պարզ չեր յերեվում, վորովհետև ծածկված եր մկանային բարակ փառով, վոր կոշվում ե վորովայնամաշկ: Վերեկում նշված ձևով կտրելով՝ վորովայնամաշկը մինչև կրծքի վոսկորը, այնուհետև մկրատը շատ ամուր սեղմելով՝ կտրեց այդ կրծուկը (կտրելու ձայնը լսելի յեղավ աշակերտներին), ապա այդ կտրվածքը շարունակեց դեպի աջ, մինչև առաջին ձախ թաթի հրմքը: Այս գործողությունից հետո թաթերն ազատելով տախտակից՝ առանց քորոցները հանելու

առանձին-առանձին ուժեղ ձգեց դեպի կողմերը և նորից ամրացրեց տախտակին: Դիտելով առաջին թաթերի շրջանի բացվածքը, յերեխանները տեսան գորտի ներքին որգանների պատկերը: Այնուհետև անհրաժեշտ յեղավ լայն բաց անելու բացվածքի ներքին պատերի ծայրերը, վորոնք ծածկում ելին այդ պատկերի վրոշ մասը:

Բռնելով մարմնի ձախ կողմի վրա գոտնված կտրված կրծուկը՝ այն շուր տվեց դեպի դուրս, վորի ժամանակ նրա հետ միասին ձգվեցին որգանները, հատկապես սիրտը: Անմիջապես կտրելով նրանց շրջապատող թաղանթը՝ որգաններն ամբողջությամբ թողնվեցին իրենց տեղում: Ծուռ տված վլոսկորները նույնպես ամրացվեցին քորոցով տախտակին:

Այսպիսով մարմնի վերեվի որգանների բացումը պատրաստ եր: Սակայն ներքեւ մասը դեռևս ծածկված եր վորովայնամաշկի յեռանկյունածեւ ծայրերով: Դրա համար ել դասատուն կտրելով վորովայնամաշկը մինչև մարմնի ներքեւ ծայրը՝ հանեց քորոցները, վորով ձգված եր մաշկը, բռնեց նրա հետ միասին վորովայնաթաղանթը, ձգեց դեպի ներքեւ և դարձյալ քորոցով ամրացրեց: Այսպիսով արգեն պատրաստ եր ամբողջ որգանների բացումը. պարզ յերեսում ելին՝ լյարդը, լեղապարկը, ստամոքսը, աղիքները, յերիկամունքը, մարմնի ներքեւ մասում միզափամփուշտը, իսկ մարմ-



Նկար 2.

նի առաջին մասում շատ լավ նկատվում ելին սիրտը և նրանից սկիզբ առնող արյունատար անօթները: Սրտի կողքերից շատ պարզ նկատելի ելին թոքաբշտիկները: Մանրակրկիտ և յերկարատև դիտումներից հետո դասատուն անջատեց լյարդը, վորի ժամանակ պարզ

յերևացին գեղձային բշտիկները: Քանդելով աղիքները և լավ դիտելով կոկորդից մինչև յետանցքը՝ շատ լավ նկատելի յեղան գունաթափ յենթաստամբսային գեղձը և վոլ մեծ կարմրամանիշակագույն փայծարի գնդիկը (տե՛ս նկար № 2):

Այս դիտումների և բացատրությունների ժամանակ դասաւուն գորտի ներքին որգանները համեմատից բարձր կարգի կենդանիների և հատկապես ճագարի ու մարդու ներքին որգանների հետ, նշեռվ նկատելի նմանությունն ու տարբերությունը: Այս աշխատանքի ժամանակ դասաւուն իր ձեռքի տակ ուներ ճագարի ներքին որգանների պատկերը և մարդու տորսը, վորոնց վրա համեմատության կարգով նա ցուց տվեց ներքին որգանները: Վերջացնելով այդ աշխատանքը՝ նա հարցերի միջոցով ամփոփեց, ապա յերկու աշակերտի կապակցված ձեռվ պատմել տալուց հետո, նյութը լավ ամրացնելու համար, դասագրից տվեց տանը սովորելու համարավատախան հոդվածը:

## 2 ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Համկ(բ)կկ 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման մեջ՝ նշվում է. — «Հարկավոր ե յերեխաններին սիստեմատիկ կերպով վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, լայնորեն կիրառելով զանազան առաջարություններ տալը՝ գիտելիքների վորոշ դասընթացը բավարար չափով տիրապետելու համար (ինդիրների, վարժությունների լուծում, մոդելների պատրաստում, աշխատանք լաբորատորիայում և այլն): Այս վորոշումից՝ ինչպես մյուս առարկաների դասաւունները, նույնպես և տարրական դպրոցի բնագիտության դասաւունները պետք ե հանեն այն հետեւլությունը, թե ուսուցի դեմոնստրացիոն աշխատանքի հետ միասին անհրաժեշտ ե աշակերտներին տալ նաև ինքնուրույն լաբորատոր աշխատանք: Այդ աշխատանքի արդյունքը պետք ե լինի այն, վոր աշակերտները ցածր դասարանից սովորեն ինքնուրույն կերպով դիտել, քննել, փորձել, վերլուծել, գոնել, ճշտել, համեմատել և վերհանել վորոշ հետեւլություններ: Գործնական աշխատանքների ժամանակ ավելի ակտիվ են գործում՝ միտքը, զգայարանները, հեղտանում և նյութի յուրացումը, զարգանում ե ինքնուրույն աշխատանքի ունակությունները և ինքնուրույն մտածելակերպը: Բացի այս ամենը՝ գործնական աշխատանքն ունի նաև դաստիարակչական խոշոր նը-

շանակություն: աշակերտը սովորում է կարգ ու կանոն, խնամքով և վերաբերվում իրերին ու գործիքներին, զարգանում են նրա ձեռքի արագ շարժումներն ու կոլեկտիվ աշխատելու կարողությունը:

Մեր դպրոցական պրակտիկան ցուց է տալիս, վոր շատ հաճախ ուսուցիչը աշակերտների լաբորատոր ինքնուրույն աշխատանքը անհրաժեշտ պիտույքների բացակայության պատճառով, փոխարինում է դեմոնստրացիոն աշխատանքով, սակայն կան այնպիսի փորձեր, վոր յեթե անգամ փորձանոթը մի հատ և, պետք ե անպայման տալ աշակերտների ձեռքը, որինտե՛կ ողի ճշնշումն ու առաձգականությունը վորոշելու ժամանակ և այլն:

Յերրորդ և չորրորդ դասարանների ծրագրային նյութից յելնելով, աշակերտներին ինքնուրույն աշխատանք կարելի յե տալ հետեւլյալ թեմաներից՝ կավի և ավագի միջով ջրի անցկացումը, կրաքարերի ճանաչելը (աղաթթուն կաթեցնել կրաքարերի վրա), չհանգած կրից հանգած կիր ստանալը, աղի հագեցած լուծույթ ստանալը, մետաղները վորպես ջերմության հավորդիչներ (ապակու և մետաղալարերի տաքացման արդյունքները), ջրի յերեք վիճակը, ջրի քամելը պղտորությունից, ողի ճնշումն ու առաձգականության վորոշումը (ողային ատրճանակ), ծաղկի կազմության ստամենասիրությունը, ծաղկի պրեպարատ կազմելը, վորոշերի հերձումը, վորոկրի կազմությունը, մկանների կծկվելը և այլն:

Վորպեսպի աշակերտների ինքնուրույն աշխատանքները հաջող ընթանան, անհրաժեշտ ե նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

1. Տրվելիք գործնական աշխատանքի թեման պետք ե բղիք ուսուցվող նյութից և, վոր դլիսավորն ե, պետք ե մատելի լինի աշակերտներին:

2. Փորձը պետք ե նախորդ ուսուցիչն ինքը կատարի՝ հաշվի առնելու համար փորձի տեվողությունը, դժվարությունները և այլն, վորպեսպի աշակերտների կատարելիք փորձի ճախողման ժամանակ՝ անմիջապես նշի, թե վորտե՛ղ ե նրանց սխալը և ինչպե՞ս պետք ե ուղղել այն:

3. Լաբորատոր ինքնուրույն աշխատանքի ժամանակ աշակերտները պետք ե իմանան, թե ի՞նչպես են կատարում այդ փորձը և ի՞նչ հարցի պատասխան՝ են փնտում: Աշակերտները գործիքները պետք ե ստանան այն ժամանակ, յերբ արդեն դիտեն, թե ի՞նչ պետք ե անեն նրանով:

4. Գործիքների և անհրաժեշտ մատերիալի բաժանումը պետք է կատարվի արագու կազմակերպված (Հերթապահ աշակերտի միջոցով) և նախորոք պատրաստված լինի (Հավաքված առանձին կոմպլեկտով, արկղի կամ թղթի փաթեթի մեջ):

5. Աշխատանքի ընթացքում ուսուցիչը հետեւում է կարգապահովյան և ոգնում յետ մնացող աշակերտներին:

6. Փորձը վերջացնելուց հետո անհրաժեշտ և նույն արագությամբ ու կազմակերպված ձևով հավաքել տալ նյութերն ու փորձիքները. այնուհետեւ միայն հնարավոր է անցնել աշխատանքի արդյունքներն ամփոփող գրուցին, հակառակ դեպքում աշակերտների ուղարկությունը կենտրոնացած չի լինի:

### ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԵՎԵՐԸ

Աշակերտների ինքնուրույն լաբորատոր աշխատանքները կարելի յե կազմակերպել մի քանի ձեվերով: Նայած վո՞ր դասարանում և տարվում այդ աշխատանքը, աշակերտները վորքանո՞վ են ծանոթ այդ յեղանակին, ի՞նչ թեմա յեն անցնում, լաբորատոր ի՞նչ սարքավորում ունի դպրոցը և այլն, ըստ այնմ գործադրվում են հետեւալ ձեվերը.—

1. Ուսուցիչը հաջորդականությամբ նշում է փորձի առանձին մանրամասնությունները. աշակերտները կատարում են անմիջականորեն: Քննարկումը գնում է զուգընթաց, ըստ մասերի: Այս ձեվը մեր բնագետ դասարաններին հանրածանոթ է վորպես «ֆրոնտալ» (հակատային) մեթոդ և մեծ տեղ է գրավում բնագիտության ուսուցման ժամանակ:

Թումանյանի անվան դպրոցի 4-րդ դասարանում ներկա յեղածու մի դասին անցնում եյին՝ «Ի՞նչ նյութերից են բաղկացած վոսկորները» յենթաթեման:

Դասն սկսվեց նախորդ նյութի կրկնությամբ, վորի ընթացքում աշակերտները պատմեցին վոսկորի կազմությունն ու նրա նըշանակությունը: Դասարան ամփոփելով այդ՝ կապեց նոր նյութի հետ և բացատրեց նոր անցնելիք նյութի համար կատարվող փորձի նպատակն ու սարքավորումը: Աշակերտ ասիստենտի միջոցով նա բաժանեց փորձի պարագաներն աշակերտներին կատարելու հետեւալ առաջադրանքները.—

1. «Բաց արե՛ք սպիրտայրոցի փակիչը» (աշակերտները կա-

տարեցին): 2. «Վերցրեք լուցկին և վառեցեք սպիրտայրոցը» (վառեցին): 3. «Երցրեք յերկաթալարը» (վերցրին): 4. «Վոսկորն ամրացրե՛ք յերկաթալարի ծալրին» (ամրացրին): 5. «Պահեցեք սպիրտայրոցի բոցի մեջ» (պահեցին): Այս առաջադրանքներից հետո դասարան հարցրեց. — «Ի՞նչ յեղավ վոսկորը»: Աշակերտները պատասխանեցին, վոր նա այրվեց, սեվացավ: Դասարան հրահանգեց. 6. «Նորից շարունակեցեք այրումը» (աշակերտները շարունակեցին): Մի փոքր հետո դասարան դարձյալ հարց տվեց. — «Ի՞նչ յեղավ սկացած վոսկորը»: Աշակերտները պատասխանեցին, վոր սպիտակեց: 7. «Այժմ սպիրտայրոցի բոցից հեռացրե՛ք այրված վոսկորը և թողե՛ք սառչի» (աշակերտները կատարեցին): 8. «Հանգերե՛ք սպիրտայրոցը կափարիչով» (հանգյրին): 9. «Հեռացե՛ք յերկաթալարը վոսկորից» (հանեցին): 10. «Զեռքով փորձեցեք ի՞նչ և լինում վոսկորը»: Աշակերտները կատարեցին և պատասխանեցին, վոր վոսկորը կոտրվում, փշովում է: Փորձից հետո դարձյալ ասիստենտ աշակերտի միջոցով հավաքել տալով փորձի պարագաները՝ մեկ անգամ հարցերի միջոցով ամփոփեց փորձի պլոցեն ու ստացված արդյունքները, հանեց ընդհանուր յեղակացություն և յերկու աշակերտի միջոցով շարադրված ձեռվ պատմել տալով վորը նյութը՝ յեղակացությունները համառոտակի ձեռվ դրանցել տվեց «աշակերտների տեսրերում»:

2. Հրահանգման յերկորդ ձեվի ժամանակ փորձը չի մանրացվում այնքան մասերի, վորքան առաջին դեպքում: Որինակ, դարձյալ նույն փորձը հրահանգման յերկորդ ձեվի դեպքում կարելի յե բաժանել յերեք մասի՝ 1. սպիրտայրոցի և վոսկորի պատրաստելը, 2. այրումը մինչև վերջ և 3. այրվածի փորձարկումը: Հրահանգման այսպիսի դեպքում ուսուցիչը նախ բացատրում է փորձի առաջին մասը, վոր աշակերտները բոլորը կատարում են, ապա դասարան ստուգում և կատարածի ճշտությունը և անցնում հրահանգման յերկորդ մասին, այնուհետև ստուգելով այն՝ անցնում է յերրորդ մասին: Հրահանգման այս ձեվի դեպքում աշակերտների ինքնուրույնությունը ավելի մեծ կլինի քան առաջին դեպքում:

3. Կա նաև հրահանգման մի յերրորդ ձեվ, յերբ դասարան սկզբում պատմում է, թե ի՞նչ ձեվով պետք է կատարեն փորձը, ապա թողնում, վոր աշակերտներն ինքնուրույն ձեվով անեն:

Մեջ բերենք մեթողիկայում<sup>1)</sup> տրված մի որինակ, վորը կառելի յէ տալ անցած նյութի ամրացման կապակցությամբ: Թիման՝ «Ծաղկի պլրապարատի պատրաստումը»:

Դասի սկզբին կրկնելով ծաղկի մասերը՝ ուսուցիչն առաջարդում է.—«Հիմա զուք կապարաստեք ծաղկի պլրապարատը և կըստանաք այսպիսի կարտոններ և ապակիներ (ցուց ե տալիս): Կստանաք նաև բամբակ, վորը պետք է փոեք կարտոնների վրա. իսկ բամբակի վրա պետք է դնեք ծաղկի առանձին մասերն ու ծածկեք ապակիով: —Հիմա ուշագիր լսեցե՛ք, թե ինչպե՞ս պետք է դնեք ծաղկի մասերը: Ամենից առաջ կտրեցե՛ք ծաղկի հինգ պսակաթերթիկները և այսպես աստղաձև դրեք բամբակի վրա (նկարում է գրատախտակին): Մեջտեղի բաց թողե՛ք, վոր վարսանդը տեղավորեք: Դրանից հետո ձեզ հեշտ կլինի անջատել բաժակաթերթերը, վոր կդնեք ահա այսպես (նկարում է) պսակաթերթիկների մեջ՝ ավելի մոտ աստղի արտաքին ծայրին:—Հիմա ձեզ անհամեմատ ավելի հեշտ կլինի հանել առելները. քորոցի ծայրով անջատեցե՛ք առելները զույգ-զույգ, դրե՛ք պսակաթերթիկների արանքում՝ կենտրոնին մոտ, համարյա բաժակաթերթիկների տակ: Մնացած վարսանդը դրե՛ք կենտրոնում: Կատարելով այդ բոլորը, վերցրեք նեղ ժապավենի նման կտրված թղթերը, վոր այսուեղ պատրաստված են, գրեցե՛ք առանձին հետեւյալ խոսքերը, վոր գրված են գրատախտակին (գրում ե գրատախտակին՝ պսակաթերթ, բաժակաթերթ, առել, վարսանդ) և շատ զգուշությամբ յուրաքանչյուր անվանում դրեք իր տեղն այնպես, վոր իր ծայրով (վորի վրա մի մեծ կետ դրեցեք) լինի ծաղկի այն մասի վրա, վորի անվանումը գուք գրել եք թղթերի վրա»:

Վերջացնելով բացատրությունը՝ ուսուցիչը առաջարկում է յերեխաներին՝ ո՛վ ի՞նչ չի հասկացել, ապա հերթապահ կամ աւիստենու աշակերտի միջոցով բաժանում է վողջ մատերիալը, և յերեխաներն անցնում են աշխատանքի: Դասի վերջին բոլորի պատրաստած պլրապարատը կարելի յէ հավաքել և պահել հետապայում ոգտագործելու համար:

Խոսելով այս լերեք ձեզերի մասին՝ պետք է նշել, վոր յուրաքանչյուրն ունի իր գրական և բացասական կողմերը: Որինակ՝ աշխատանքի առաջին ձեռ, վոր կոչվում է «ֆրոնտալ» մեթոդ, ունի շատ առավելություններ.— աշխատանքը պնում է հավասա-

ռաշափի, դասարանում յետ մնացողներ կամ առաջ վազողներ չը-կան, վորի շնորհիվ դասարանի կարգապահությունը չի խանգար-վում, քանի վոր աշակերտներին ինքնուրուց աշխատանք չի մը-նում: Աշակերտները քիչ սխալներ են անում և արագ են ըմբռու-նում մշակվող նյութը: Ուսուցիչը բացատրականը տալիս ե ամ-բողջ դասարանին և կրկնելու կարիք չի գեցագվում: Այս առավե-լություններն ի նկատի ունենալով ե, վոր տարրական դպրոցի բնագիտության դասատոնները գերադասում են հրահանգման ա-ռաջին ձեր: Սակայն «ֆրոնտալ» մեթոդն ունի նաև բացասական կողմեր. շափականց թույլ ե զարգացնում ինքնուրուց աշխատան-քի կարողությունը, և աշակերտները աշխատանքը կատարում են մեխանիկորեն: Ճիշտ ե, ձեռքի ճիշտ ունակությունները զարգա-նում են, սակայն չի մշակվում այդ առավելությունը ճարպկորեն ոգտագործելու ունակությունը, յերբ անհրաժեշտ ե:

Աշակերտների ինքնուրուց աշխատանքի նշված ձելերից բա-ցի կա նաև մի այլ ձեռք, վորի ժամանակ լաբորատոր աշխատան-քին տրվում է հետազոտական բնույթ, վորը կիրառելու համար պետք է առկա լինեն հետեւյալ պայմանները.—

1. Աշխատանքն սկսելուց առաջ աշակերտները պետք ե պարզ պատկերացնեն և իմանան հետազոտության նպատակը:

2. Աշակերտներն ինքնուրուց նշում են՝ հետազոտության ձանապարհը, աշխատանքի ձեռները և նրանց հաջորդականությունը:

3. Առանց ուսուցչի թելագորության՝ հետազոտությունից բըդ-խող վրոշակի հետեւյությունը հանվում է իրեն աշակերտի կող-ծից: Հարց է ծագում՝ հանրավո՞ր ե արդյոք այդ պայմանների ստեղծումն ու կիրառումը հատկապես տարրական դպրոցում: Վո-րոշ դեպքերում՝ այս: Որինակ. Յ-րդ դասարանում սովորում են ջրում լուծվող և լուծվող նյութերի մասին: Ցուցադրական և ինք-նուրուց փորձերի միջոցով գիտեն կերակրի աղի, հանգած կրի սպիտակ փոշու, մանրացրած կավիճի, շաքարի և այլ նյութերի լուծելիության կամ հակառակ հատկանիշները. գիտեն, թե լուծ-վելու կամ լուծվելու դեպքում զուրն ի՞նչ կուն է ստանում: Համ-տատ համոզված լինելով, վոր աշակերտները շատ լավ գիտեն այդ բոլորը, կարելի յէ կատարել հետեւյալ աշխատանքը.— աշա-կերտներին բաժանելով մի շարք լուծվող և լուծվող նյութեր՝ աղ, կավիճ, սոդա, կավ, շաքար, կիր, սելիտրա և այլն, նրանց առա-ջադրվում է փորձով գտնել՝ վորն և լուծվում չըի մեջ, վորը վոր:

1) Павлович.—«Практика преподавания естествознания в началь-ной школе», стр. 28.

Այդ ժամանակ տեսրում առանձնացնել են տալիս յերկու սյունյակ՝ մեկում նշել են տալիս «զուծվող», մյուսում՝ «շուծվող» նյութերը և արդյունքները գրանցում համապատասխան սյունյակներում։ Ահա այսպիսի աշխատանքը համապատասխանում է վերելքում պահանջվող յերեք պայմաններին և ինքնըստինքյան կրում է հետազոտական բնույթ։

Ըստ ծրագրային նյութի՝ այսպիսի աշխատանք շատ կարելի յե հանձնարերել, ինչպես, որինակ. «Հողի մեխանիկական անառ լիզը» անցնելիս նրանց կարելի յե տալ հետազոտելու բանջարանոցի, շերմոցի, անտառի հողերը և նրանց կազմությունը՝ համեմատել միմյանց հետ։ Կամ ֆրոնտալ մեթոդով ուսումնասիրելով կիրը, կավը, գրանիտները, կարելի յե հանձնարարել հետազոտական աշխատանք. կամ արդյոք մեր շրջապատում կիր, կավ, գրանիտ և այլն։

Աշակերտների ինքնուրույն լաբորատոր աշխատանքների հընարավոր ձեվերը նշելուց հետո պետք ե ասել, վոր բնագետ դաստուն ուսուցման սկզբնական շրջանում աշխատանքի ծանրության կենտրոնը պետք ե համարի «ֆրոնտալ մեթոդ», սակայն հետագայում, յերբ յերեխաներն արդեն վորոշ գաղափար են կազմում գործնական աշխատանքների մասին, պետք ե հնարավորություն ստեղծել գործադրելու նաև մյուս յերկու ձեվերը։

## ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԿԱՐՆԵՐԻ, ՄՈՒԼՅԱԺՆԵՐԻ, ԶՈՐ ՅԵՎ ԹԱՑ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Բնագիտության դասավանդման մեթոդների մեջ մեծ տեղ է գրավում դիտողականությունն ու զննողականությունը: «Յեթե մանկավարժը ցանկանում է, վոր վորևէ բան ամուր տպավորվի յերեխայի հիշողության մեջ, պետք ե մտահոգվի, վոր ըստ կարելվույն շատ զգայարաններ՝ աշքը, ականջը, ձայնը, մկանալին շարժման զգայությունը և, անգամ յեթե հնարավոր է, հոտոտելիքն ու ճաշակելիքը, մասնակցեն հիշողության ակտին», — ասում ե ոռու հայտնի մանկավարժ Ռոշինսկին («Մարդը վորակս դաստիարակության առարկա», — 149 էջ): Յել իրոք, փորձված դասատուն գիտի, վոր դիտողական ուսուցումն անհրաժեշտ է կիրառել վոչ միայն նրա համար, վոր հեշտացնում է առարկայի բացարությունն ու մտապահումը, այլ նաև այն պատճառով, վոր դիտու-

զականության վրա հիմնված դիտելիքները ավելի խորը տպակություն են թողնում և ուսուցման ժամանակ ոդնում են յերեխաների մեջ զարգացնելով՝ հիշողությունը, դատողությունն ու լերեկակայությունը։

Տարրական դպրոցի բնագիտության դասատուն շատ հաճախ անցնելիք ծրագրային նյութի մեջ հանդիպի այնպիսի թեմաների, վորոնց ուսուցումը կամ փորձարկումը բնության ծոցում և լաբորատորիայում հնարավոր չի: Այդ դեպքում դասատուն պետք ե ուսուագործի տվյալ թեմայի վերաբերյալ անհրաժեշտ նկարներ, մուլյաժներ, չոր և թաց պրեպարատներ: Սրան զուգորդվում է ուսուցչի կենդանի խոսքը, վորը մի կողմից պետք ե կառուցված լինի այնպես, վոր յերեխաների մեջ հետաքրքրություն զարթնեցնի դեպի ուսումնասիրվող նյութը, իսկ մյուս կողմից՝ յերեւան հանի ուսումնասիրվող ոբյեկտի, կամ յերեվութի պատկերացումների կոնկրետությունն ու պարզությունը, վորը հնարավոր չի տեսնել դպրոցական պայմաններում: Այստեղից հետեւում ե, վոր յերեխաների դիտողականությունն ու զննողականությունը պետք ե անպայմանորեն զեկավարել հմուտ ու խելացի ձևով։

Վորպեսզի ուսուցիչը կարողանա վերեվում նշված իր դասավանդման մեթոդն արդյունավետ ձեվով կիրառել, անհրաժեշտ ե, վոր նախորոք մտածված հարց ու պատասխանի միջոցով վերհանի աշակերտների ունեցած գիտելիքների պաշարը տվյալ որյեկտի և յերեվութի վերաբերյալ: Այսուհետև արդեն, յեթե դասավանդումը տարվում է նկարների միջոցով, կարելի յե կախ տալ անհրաժեշտ նկարը, թույլ տալ մի քանի բոպե լուս դիտել, ապա անցնել նրա բովանդակության ընթերցմանը, վերջում հանել ընդհանուր յեզրակացություններ և կապակցված ձեվով պատճել տալ յերեխաներին: Իսկ յերբ դասավանդումը կատարվում է մուլյաժների կամ պրեպարատների միջոցով, ուսուցչի կենդանի խոսքից հետո անհրաժեշտ է հնարավորություն տալ աշակերտներին մոտիկից տեսնելու, դիտելու, շրջափելու ոբյեկտները և ապա վերջում կատարել ընդհանրացումներ։

Դպրոցական պրակտիկայում, շատ հաճախ դիտողական աշխատանքի ընթացքում ուսուցիչները թույլ են տալիս մեթոդական սխալներ: Մի շարք դպրոցներում (Կագանովիչի, Թելմանի և այլն) ուսուցիչը դասն անցնելուց հետո յե միայն ցույց տվել այն նկարը, վոր անհրաժեշտ եր տվյալ թեման



անցնելու սկզբին ցուց տալ: Յերեմին, թեմայի սկզբից ե ոգտագործվում նկարը. աշակերտները դասարան մտնելիս անմիջապես տեսնում են պատին փակցված այն նկարները, վորոնց ոժանդակությամբ պետք ե անցնեն նոր նյութը: Ուսուցիչը շղգալով, վոր յերեխաները գրաղված են նկարները դիտելով, սկսում ե կրկնել անցած նյութը, և դասը դրանով անարդյունավետ ժամանցի յէ վերածվում:

Վորպեսզի դիտողական իրերը սպասվելիք արդյունքը տան, անհրաժեշտ ե յերեխաների ուշադրությունն ամբողջականությամբ կենարուացնել անցնելիք նյութի վրա, հակառակ պարագայում դիտողական իրեր դասավանդման ընթացքի վրա բացասաբար կանդրադառնա:

Դիտողական իրերի գործադրման ժամանակ անհրաժեշտ ե պահպանել հետեւյալ կանոնները.— 1. Վու մի իր մինչև դասի բուն ընթացքը շպետք ե ի ցուց դրվի աշակերտներին: Զանազան նկարներն ու աղյուսակները պետք ե դրվեն ուսուցչի սեղանի կամ պատի մոտ շուր տված ձեվով, իսկ վորեւե մողել, խրտվիլակ, կամ թաց պրեպարատ պետք ե պահված լինի դասարանի պահարանում. յերբ ուսուցիչը վերջացնում ե պահանջվող նախապատրաստական աշխատանքը (վորի մասին խոսվեց վերևում) և անցնում ե բուն նյութին, այդ վայրկյանից կարելի յէ ոգտագործել և ի ցուց դնել պահանջվելիք իրերն ու նկարները:

2. Ցուցադրման ժամանակ ավելի խոշոր պարագաներ պետք ե դրվեն այնպիսի տեղ, վոր պարզ յերեան վողջ դասարանին (պատի մոտ կառուցել դարակներ, ուսուցչի սեղանի մոտ դնել փոքր նստարան և այլն):

3. Բնական մանր իրերից, վորոնք ոգտագործվելու յեն դասի ժամանակ՝ վորպես դիտողական մատերիալ, նպատակահարմար ե ունենալ մի քանի հատ (ծաղկի, հանքաքարի նմուշներ, միջատներ և այլն): Յեթե իրը մեկ հատ ե, նախորոք բացատրելուց հետո ուսուցիչը շպետք ե բավարարվի իր սեղանի վրայից ցուց տալով կամ աշակերտներին հանձնելով, այլ ինքն անձամբ արագ կերպով պետք ե մոտեցնի յուրաքանչյուր սեղանին:

4. Խիստ անհրաժեշտ ե, վոր ուսումնասիրված նկարը, աղյուսակը կամ իրը վորոշ ժամանակ լինի աշակերտների աշխի առաջ: Կարելի յէ նկարները և կոլեկցիաները (վերջինները դնելով պահպակու տակ) կախ տալ պատերից, իսկ խրտվիլակներն ու պրեպա-

րատները դնել պահարանում, սակայն յերեխաներին տեսանելի վիճակում:

Թերենք մի դասի նկարագիրը՝ Հիմնված հարց ու պատասխանի վրա՝ նկարների միջոցով:

1. Դասի թեման՝ «Գիշատիչը թոշուններ»<sup>1)</sup>:

2. Կահավորում, — արծիվ նկարը և մյուսը թոշունների պատկերը. չոր պրեպարատ՝ գիշատչի ձանկերը:

3. Դասի ընթացքը. — Ուսուցիչը. «Յերեխաներ, այսոր մենք պետք ե ծանոթանանք գիշատիչը թոշուններին. սակայն սկզբում՝ դուք ինձ պատմեցնե՛ք, թե թոշուններն ի՞նչպես են հարմարվել ողի կյանքին»: Աշակերտները պատմում են, վոր թոշունի մարմինը առչելից նեղ ե, վոր ոգնում ե նրան ողն ավելի հեշտ ձեղքելու թոշունի թեւերին կան մեծ և խիտ փետուրները. թոշունը թափահարում ե, թիերով բռնում ե ողը (ինչպես թիակով՝ ջուրը) և արագությամբ շարժվում առաջ: Պոչի վրայի գտնված մեծ փետուրները կատարում են դեկի դեր: Թոշունի մարմինը ծածկված ե փետուրներով և աղմափետուրներով, վորոնց արանքում ող կա, վորը թուզ չի տալիս մարմնի շերմությունն անցնելու դրահ ողին, դրա համար ել թոշունները թոշելիս ցուրտ չեն զգում: Թոշունները ծնուրի և ատամների փոխարեն ունեն կտուց: Բոլոր խոշոր վորներն ունեն բարակ պատեր, վորոնց ներսում կա ող: Բացի այս՝ ներքին որգանների արանքում նույնպես գտնվում են ողով լցված պարկեր: Այս բոլորը թոշունի մարմինը յեթելացնում ե, վորի շնորհիվ նա ազատ կերպով թոշում ե ողում:

Յեթե ավելացում չկա, ուսուցիչն անցնում ե նոր նյութին: Գրատախտակից կախ ե տալիս գիշատիչը թոշունների նկարը, վորուեղ պատկերված են գիշատիչը թոշուններից՝ արծիվ, բազե, բռե և բվեճ, — և անում ե. «Յերեխաներ, ուշադրությամբ դիտեցնե՛ք այս թոշունների նկարը և հատկապես ուշադրություն դարձրեք նըրանց կտուցի, վոտների, թեվերի վրա և յեթե կնկատեք վորեն առանձնահատկություն, հետո կհաղորդեք ինձ»: Ուսուցիչը միաժամանակ ցուց ե տալիս գիշատիչը թոշունների ձանկերի չոր պրեպարատը: Յերեխաները 2—3 րոպե լուր դիտելով նկարն ու

1) Այս դասի որինակը վերցված ե ՌեֆՍՀ-ի Խվանովի մարդի Զետառվենսկի արքաքան գպրոցի գործարանի դասաւու Ալեքսեյեվի որինակելի դասի նկարագրից:

Արեպարատը՝ ձեռք են բարձրացնում: Դասատուն աշակերտներից մեկին հարցնում է: Աշակերտը պատասխանում է, վոր բոլոր թուղուններն ունեն ամուր, սուր և ծոված ճանկեր, ամուր ու ծոված կտուց և յերկար, ուժեղ թեքքը: Բոլոր այդ թուղունները մեծ են մեր սովորական թուղուններից:

Ուսուցիչ.— «Ուշադրություն դարձրե՛ք նրանց վոտների մատների կառուցվածքի-վրա»: Աշակերտները ձեռք են բարձրացնում և պատասխանում, վոր նրանց մատները դասավորված են՝ մեկը յետ և յերեքը առաջ:

Ուսուցիչ.— «Ճիշտ է: Այժմ տեսնենք, թե գիշատիչ թոշուններին ինչո՞ւ համար և հարկավոր այդ բոլորը»: Նա դիմում է մի աշակերտի: «Ասա տեսնենք, թե ինչո՞ւ համար են պետք նրանց այդպիսի ճանկերը»: Աշակերտը պատասխանում է, վոր նրանք դիշատիչներ են ու մնվում են այլ կենդանիներով և վորպեսզի կարողանան նրանց լավ բռնել և բարձրացնել վերև, անհրաժեշտ ե ունենալ ճանկերի ու մատների այդպիսի կառուցվածք: Ապա ուսուցիչը հարցնում է նրանց կտուցի ծովածության ու մեծության մասին: Պատասխան.— «Թոշունները ատամներ չունեն. այդ կեռ կտուցով ու սուր ճանկերով բռնած վրասը մաս-մաս են անում: Բացի այդ՝ կեռ կտուցով նրանք շշմեցնում են վորսին, վորպեսզի թոփչի ժամանակ շշարժվեն ու շխանգարեն թոփչը»: Ուսուցիչ.— «Ճիշտ է: Իսկ ինչո՞ւ համար են հարկավոր գիշատիչ թոշուններին ուժեղ և մեծ թեկու»: Աշակերտներից մեկը պատասխանում է: «Վորպեսզի արագ թոշեն և հասնեն վորսին. իսկ յերբ բռնում են, անհրաժեշտ ե բարձրացնել վերև և տանել այդ վորսը»: Ուսուցիչ.— «Ծատ լավ: Իսկ ինչո՞ւ գիշատիչները բոլորը մեծ են»: Պատասխան.— «Գիշատիչները պետք ե մեծ լինեն, վորպեսզի հաղթեն վորսին, հակառակ դեպքում վորսը կհաղթի նրանց»:

Ուսուցիչ.— «Յերեխաներ, ահա մենք ձեզ հետ միասին վերլուծեցինք գիշատիչ թոշունների կառուցվածքը: Ճիմա ձեզնից ո՞վ կպատմի այդ բոլորի մասին»: Պատմում են. վորից հետո ուսուցիչը հարց ե տալիս, թե ինչպիսի՞ գիշատիչ թոշուններ են ապրում մեզ մոտ: Աշակերտները պատասխանում են, վոր մեզ մոտ ապրում են՝ արծիվ, բագե, բու և բվեճ:

Ուսուցիչ.— «Վո՞րն ե ամենամեծ գիշատիչ թոշունը»: Պատասխան.— արծիվը:— «Յերեխանե՛ր, ճիմա ուշադրություն

դարձրեք գիշատիչ թոշուններից բուի և բվեճի աշքերի վրա: Ի՞նչ մեծության են նրանք»: Պատասխան.— «Բուի և բվեճի աշքերը շատ մեծ են»: Ուսուցիչը:— «Ինչո՞վ են կերակրվում նրանք»: Պատասխան. «Նրանք կերակրվում են մկներով, առնետներով ու այլ կրծող կենդանիներով և մեզ ոդուտ են բերում»: Ուսուցիչը: «Այդ ժիշտ է. բուի և բվեճի աշքերի բիբերը շատ մեծ են. նրանք հարմարված են գիշերային թուշքին, յերբ կրծող վնասատուները դուրս են գալիս բներից, բուն և բվեճը վոշնչացնում են նրանց: Ցերեկը այդ գիշատիչները թափնվում են անտառում, քանի վորցերեկված լուսուր նրանց կուրացնում ե և նրանք վատ են տեսնում: Մյուս գիշատիչ թոշունները՝ արծիվը և բազեն մարդկանց վնաս են տալիս: Ճիմա պատմեցի բազեցի մասին»: Աշակերտները պատմում են, վոր նա մոխրագույն ե, ապրում է մեծ մասմբ՝ անտառներում, սակայն շատ հաճախ թոշում ե նաև բնակելի վայրերը, հափշտակում ընտանի թոշուններ և տանում: Բազեն վնասաբեր գիշատիչ է: Ուսուցիչը: «Ճիմա, յերեխանե՛ր, ծանոթանանք մյուս գիշատիչ թոշունին: Հապա ուշագիր գիտեցե՛ք այս նկարը»: Կախում է արծիվի նկարը: Յերեխաները յերկու-յերեք բռպելու դիտում են: Ուսուցիչը:— «Ինչպիսի՞ թոշուն ե պատմերված այս նկարում»: Պատասխան. «Այստեղ նկարված է արծիվը»: Ուսուցիչը:— «Ո՞վ կպատմի արծիվի մասին»: Պատասխան.— «Արծիվը շատ մեծ թոշուն է, նրա մեծությունը յերբեմն հասնում է 1 մետրի: Արծիվը բռն ե շինում ժայռերի վրա, վորպեսզի վոլ վոք շտանի նրա ձագերին: Նա սնվում է թոշուններով և հաճախ հափշտակում է ընտանի կենդանիներ՝ գառ, ով, այծ, հորթ և այլն»: Այն հարցին, թե ո՞վ լրացում ունի, վոլ վոք ձեռք շի բարձրացնում. դրա համար ել ուսուցիչն ոինքն ե լրացնում, վոր արծիվը բռն ե շինում անմատչելի ժայռերի կամ շափականց բարձր ծառերի վրա: Արծիվները բազմանում են ձվերով, մեկ տարում ունենում են մեկ կամ յերկու ձագ: Զագերը ձվից դուրս են գալիս արդեն բմբլակալած: Նրանք շատ շատակեր են, և ծնողներն անընդհատ վորս են բերում նրանց համար (թոշուններ և զանազան մանր կենդանիներ): Ակզրում ծնողներն են կերակրում նրանց մանրացրած վորսով, իսկ յերբ մի քիչ մեծանում են, վորսը պատառություն են իրենք: Արծիվի ձագերը մեծանում են միմիկայն 5 տարուց հետո, իրենք իրենց հերթին ձագեր են ունենում: Արծիվն ապրում է 100 տարուց ավելի: Ար-

ծիվները վոչնշացնում են Հսկայական քանակությամբ վորսի թոշուններ և կենդանիներ, մարդկանց շատ մեծ վնաս են հասցնում: Սակայն կան արծիվներ, վորոնք ավելի փոքր տեսակի յեն, ապրում են տափաստաններում, սնվում են կրծողներով, յերեմնել ընտանի կենդանիներով: Տափաստանային արծիվներին հաջողվում են ընտելացնել. այդ ժամանակ նրանք ուզնում են մարդկանց վորսալու վայրի գաղաններ:

Վերջացնելուց հետո ուսուցիչը կարող է համապատասխան հոդված կարդալ գրականությունից, իսկ տանը սովորելու համար հանձնարարվում են կարդալ իրենց դասագրքից համապատասխան հջեր:

#### 4. ԴՐՈՅԱԿԱՆ ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

Եքսկուրսիա անվանվում է աշխատանքի այն ձեվը, վորք ժամանակ դասատուն աշակերտների հետ միասին դուրս և գալիս դպրոցական պատերից: Բնագետ մանկավարժի աշխատանքի պլանի առաջին անդերից մեկը պետք է զրավի եքսկուրսիան, վորովհետեւ նա ունի խոշոր կրթական-դաստիարակչական արժեք: Եքսկուրսիայի ժամանակ աշակերտն ստանում է նոր գիտելիքներ, տրված նյութը յուրացնում է արագ և հեշտ, դյուրությամբ և պատկերացնում բնության որյակտների փոխհարաբերությունը և նրանց փոխադարձ կապը շրջապատզ աշխարհի հետ: Եքսկուրսիայի միջոցով աշակերտի մեջ ամրանում է գիտակցական կարգապահությունը, զարգանում է ինքնուրույն աշխատանքի ունակությունը: Եքսկուրսիան սովորեցնում է խնամքով վերաբերվել դեպի հասարակական գույքը, զարգացնում է կուլտուրական ունակությունները, կամքի ուժը, հնարագիտությունը, միջավայրին հարմարվելու հատկությունները, փոխադարձ ոգնության գիտակցությունը և այլն:

Այսպիսով եքսկուրսիան դպրոցական աշխատանքի մի լուրջ տեսակն է և ունի իր թեման, սկանը, խնդիրներն ու աշխատանքի ձեվերը:

Բնագիտական եքսկուրսիաները կարելի յե կազմակերպել յերեք ուղղությամբ՝ 1. եքսկուրսիա դեպի բնություն, 2. եքսկուրսիա դեպի արտադրություն (արդյունաբերական և գյուղատնտեսական), 3. եքսկուրսիա դեպի թանգարան:

Բնորոշենք յուրաքանչյուրն առանձին.—

1. Եքսկուրսիա դեպի բնություն: Մրա խնդիրն է ծանոթաց-

նել յերեխաներին բնության՝ իր բոլոր բազմազանությամբ, սուվորեցնել նրանց ինքնուրույն կերպով ուսումնասիրելու առարկաներն ու յերեսությները իրենց բնական պայմաններում: Բացի այդ՝ եքսկուրսիան դեպի բնությունը յերեխաներին հնարավորություն և տալիս փայլուն ու կոնկրետ փաստերով ըմբռնելու բնական յերեվությների կապը և մարդու ներգործությունը բնության վրա: Այդ տեսակի եքսկուրսիան դաստիարակում է խնամքատար վերաբերմունք դեպի բնությունը, զարգացնում է եսթետիկական ձաշակ: Եքսկուրսիան դեպի բնություն՝ լայն հնարավորություն և տալիս յերեխաներին ազատ շարժումներ կատարել մաքուր սովում, վորը նպաստում է նրանց փիզիկապես ամրապնդվելուն: Վերջացակես եքսկուրսիան դեպի բնություն՝ հնարավորություն և տալիս հավաքելու բնական մատերիալներ հետագա ուսումնասիրության համար, կամ պատրաստելու նրանցից բազմատեսակ դիտողական նյութեր՝ հերթարիստներ, կոլեկցիաներ, պրեմապարատներ և այլն:

Այս տիպի եքսկուրսիան կարելի յե կազմակերպել յերկու ձեվով.

ա) Ուսուցիչը աշակերտներին դուրս է բերում դպրոցի բանկը կամ շրջակայքը և ուսումնասիրում և այնտեղ բնական վորեպի յերեվույթը, որինակ՝ տերեվաթափ, տերեվապատում, կամ բնության արթնանալը (ծառերի ծաղկելը, մշշատների դուրս գալը, թռչունների աշխատանալը և այլն): Այս աշխատանքը շատքից ժամանակ կտեսվի, իսկ եքսկուրսիան կհամարվի շատ պարզ տեսակի:

բ) Ուսուցիչը տանում է աշակերտներին դեպի բնություն՝ դպրոցի պատերից շատ ավելի հեռու, վոր տեվում է 1—2 ժամ: Այսպիսի դեպքում եքսկուրսիայի նպատակը շատ ավելի բարեկ է, քան առաջին տիպի եքսկուրսիայի ժամանակ. օրինակ՝ գնալ անտառ, այգի, բանջարանոց, գիտափ, պուրակ և այլն... դիտել ծառերի բողբոջումը, նրանց բազմազանությունը, սերմերի տարածումը քամու միջոցով, նրանց կառուցվածքը, հարմարանքները, թե ինչպես սերմերը սողում են տրորված ճանապարհներով և կպչում են բանջարանոցի փիրուն հողին. դիտել հողի շերտերը ձորի կտրվածքի մոտ, կրաքարերը, կավաշերտերը, ջրի աշխատանքի արդյունքները, նրա բնակիչները կամ բուսականության յուրահատկությունը՝ կապված հողի հատկության հետ և այլն:

2. Եխկուրսիա դեպի արտադրություն.— ա) եքսկուրսիա կարելի յե կատարել դեպի ա) արդյունաբերություն (գործարաններ, ֆաբրիկաներ, արհեստանոցներ), վորտեղ անմիջականորեն հնարավոր կլինի ծանոթանալու արդի տեխնիկայի հզորությանը, տվյալ ճյուղի արտադրության, հումուլի վերափոխման ու արտադրանքի ստացման:

բ) Եխկուրսիա դեպի գյուղատնտեսական հիմնարկները՝ վոլխոզների, սովորոզների դաշտերը, բանջարանոց, կենդանաբանական ֆերմաներ, վորտեղ բազմաթիվ որինակներով կարելի յե ցուց տալ, թե ինչպես ե մարդը գիտության ոգությամբ գլերափոխում բուսական և կենդանական աշխարհը, վորտեղ մոռափից ծանոթանում են կոլխոզի կյանքին, նրա կուտուրական ժշակություններին և այլն:

3. Եխկուրսիա դեպի բանգարան և ցուցահանդեսներ.— (բուսաբանական, կենդանաբանական, յերկրաբանական և այլն): Այս տիպի եքսկուրսիաների ժամանակ, շնայած ուսումնասիրվող որբեկտները կարված են լինում իրենց բնական շրջապատող միջավարից և մեծ մասամբ անկենդան լիճակումն են, այնուամենայնիվ ունեն խոշոր արժեք: Թանգարանում և ցուցահանդեսում տեսնելով բազմապիսի բուսական և կենդանական եքսպոնատներ, նկարներ, խրտվիլակներ, կմախքներ, յերեխաները դիտում են այդ մատերիալը ազելի հարուստ, ավելի բազմազան, ավելի լայն ծավալով, քան դպրոցի կարինետ-լաբորատորիայում: Այստեղ նույնպես կարելի յե ծանոթանալ տեղական կամ այլ տեղերի ֆլորային ու ֆաունային ավելի լայն ծավալով, քան եքսկուրսիայի դեպքում դեպի դպրոցի շրջապատը: Դպրոցական փորձը ցուց է տվել, վոր ծրագրային վորոշ նյութեր պարբերաբար թանգարանում և ցուցահանդեսում դիտելու դեպքում շատ մեծ արդյունք և ազիլ: Շատ ուսուակար յե յերեխաների համար անշափի հետաքրքիր և եքսկուրսիան դեպի կենդանանոց, վորտեղ կարելի յե տեսնել բազմազան կենդանիներ կենդանի լիճակում և նրանց մասին կազմել կոնկրետ պատկերացումներ՝ ինչպես արտաքին տեսքի մասին և այլն:

Անհրաժեշտ ե նշել, վոր այս եքսկուրսիաները կարելի յե չազմակերպել յերկու կերպ՝ դպրոցական (դասերի ընթացքում) և արտադպրոցական (դասերից դուրս): Այս յերկուսն ել իրենց

հերթին կարող են լինել՝ ա) անմիջապես տվյալ դասարանի ծրագրային նյութին կապված եքսկուրսիա, վորն իր հերթին նախ կարող ե ցուցադրել այն, ինչ արդեն անցել են ծրագրային նյութով, վորի ժամանակ ուսուցիչը իր բացատրությունների ընթացքում հենվում ե անցած նյութի համապատասխան մասերի վրա: յերկորդ՝ յերբ եքսկուրսիան, այսպես ասած, «կուհում ե» այն, ինչ պետք ե հետո անցնեն: Այսպիսի դեպքում ուսուցիչն եքսկուրսիայի ժամանակ պետք ե աշակերտների ուշադրությունը կենտրոնացնի այն ոբյեկտների և յերեվույթների վրա, վոր հետագայում պետք ե սկսագործվեն նյութն անցնելու ժամանակ: Այսպիսի եքսկուրսիաների առարկա կարող են հանդիսանալ ցուցահանդեսներում և կրկեսներում համապատասխան ցուցադրումները: Յերկորդ տիպի եքսկուրսիան, վորը ծրագրային նյութի հետ չի կապված և տարրական դպրոցում գրավում ե ուրուց տեղ, — զբոսանքներն են: Նրա նպատակն ե թարմ ոդ ծծել, խաղալ, ուրախանալ, սակայն զրա հետ միասին՝ դիտել շրջապատը, ծանոթանալ բուսական և կենդանական աշխարհին, հավաքել վորոշ բույսեր և կենդանիներ: Այս տիպի զբոսանքների ժամանակ ուսուցիչը չի ունենա այն պլանն ու ուսումնասիրության խնդիրները, ինչ անհրաժեշտ ուսումնական եքսկուրսիաների ժամանակ:

2. Ուսուցչի նախապատրաստվելը Եխկուրսիային.— Ինչպես վերեկում նշեցինք՝ եքսկուրսիան հանդիսանում ե դպրոցական աշխատանքների լուրջ ձեւերից մեջ, նա ոմի իր թեման, պլանը, աշխատանքի ձեւերն ու խնդիրները: Սրանից բախում ե այն լուրջ և մանրամասն նախապատրաստումը, վոր անհրաժեշտ ե նշանակած նպատակին հասնելու համար: Ամենից առաջ յենելով տվյալ դասարանի ծրագրից բնագետ դասատուն տարեկան աշխատանքի պլանավորման ժամանակ պետք ե ի նկատի ունենալ ուսուցչի դպրոցական կամ աշխատանքի համար տեսակները՝ տեսակները և դասաւորի մեջ մասամբ վերջին ժամերին:

Եքսկուրսիայի պլանը կազմելիս ուսուցչին, անհրաժեշտ ե, ինչպես սովորական դասին նախապատրաստվելիս, շատ լավ ժամանակ նյութը: Յեթե դասարանում տվյալ խնդիրը լուծելիս ուսուցչին ոգտվում ե դասագրքից և գրականությունից, եքսկուրսիայի ժամանակ արդեն ուսուցիչը պարտավոր ե լուրջ կերպով ծանոթանալ այն վայրին, վորտեղ տանելու յե եքսկուրսիան:

Քերենք մի կոնկրետ որինակ: Յենթադրենք ուսուցիչը նպատակ է պրել յերեխաներին տանել մի վորևել ջրավազան: Տեսնենք, թե ինչն է նախապատրաստական աշխատանքը: Նախ և առաջ պլանավորելով մարշրուտը, ուսուցիչը պարտավոր է այդ մարշրուտով գնալ այն վայրը, վորտեղ տանելու յերեխաներին (գուր, գիճ, ձահճուտ, գետակ և այլն): Տեղում ծանոթանալով ֆառնաշին և գտնելով այն հարուստ ու առաջադրված նպատակի համար ձեռնոտու, նշում է այն տեղերը, վորտեղ հնարավոր է կատարել նախատեսնված աշխատանքը: Կամ յեթե ուսուցիչն ուզում է աշակերտներին տանել եքսկուրսիա վորեվե արտադրություն, նախքան եքսկուրսիա գնալը նա անպայման պետք է գնա տվյալ վայրը և անձամբ ծանոթանա արտադրության տեխնիկային, իմանա նրա պատմությունը, վո'րտեղից է ստացվում հումուզը, վառելանյութը, ո՞ւր է կենտրոնացվում և ինչպես է ոգտագործվում տրված արտադրանքը և այլն: Այս բոլորն անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի եքսկուրսիայի ժամանակ ուսուցիչը զանազան չպարզաբանված անակընկալ հարցերի չհանդիպի, անձամբ զեկավարի ու բացատրի արտադրության վողջ պրոցեսը: Այդ կարելոր է նաև ուսուցչի անձնական հեղինակությունը բարձր պահելու համար:

Դնալով ընտրված վայրը՝ ուսուցիչը կազմում է աշխատանքի մոտավոր պլանը, նշում է իր մոտ, թե վորտեղ պետք է հավաքվեն, ի՞նչ մարշրուտով պետք է գնան, վո'րտեղ ինչպիսի բացառություն պետք է տա, վո'րտեղ ի՞նչ աշխատանք կամ առաջադրանք պետք է հանձնարարի, վորտեղ՝ պետք է հանգստանան, ի՞նչ պետք է հավաքեն և այլն:

Միենալով վայրը կրկնակի եքսկուրսիա կատարելուց առաջ անգամ, ուսուցիչը պետք է նախորոք դիտի վայրը, վորպեսզի ընության կամ մարդկանց կողմից կատարած փոփոխությունը հաշվի առնելի (անտառում այդ տեղը կտրված է ծառերից կամ վարած ե բնակչության կողմից, կամ այն վայրը, վորտեղ ցուց է տված շերտերի դասավորությունը փուլ է յեկել, կամ լցվել է աղբով և այլն) և պատահականության չհանդիպի:

Ուսուցչի նախապատրաստական աշխատանքը վերջանում է կազմելով եքսկուրսիայի համառոտ, բայց կոնկրետ պլանը, վորն իր մեջ պետք է ունենա հետեւյալ բաժինները. ա) եքսկուրսիայի թեման, բ) գիտելիքների կարճ բովանդակությունը, վոր պետք է

ստանան աշակերտները, գ) եքսկուրսիայի հաջորդական ընթացքը, առաջադրանքների հիմնական խնդիրները, վոր պետք է տրվի աշակերտներին իրենց անհատական կամ խմբակային աշխատանքի ընթացքում, յեղափակիլ գրուցի կարճ բովանդակությունը, դ) կահավորումը, յի) եքսկուրսիայի արդյունքների վերջնական մշակումը:

### Ա.ՇԱԿԵՐԸՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻՆ

Եքսկուրսիայի պլանը կազմելիս ուսուցիչը պետք է մտածի աշակերտների նախապատրաստման մասին: Նախ յերեխաները պետք է շատ լավ պատկերացնեն եքսկուրսիայի նպատակը, վորպեսզի տեղում արագ կողմնորոշվեն: Յեթե յերեխաները պետք է կատարեն վորեվե աշխատանք կամ ստանան վորեվե առաջադրանք (մատերիալի հավաքում, հերթարիումների կազմում, դիտողություններ, չափումներ և այլն), ապա այդ բոլորի մասին նախորոք ցուցմունքներ պետք է ստացած լինեն: Բացի այսպիսի մեթոդական նախապատրաստումից, աշակերտներին անհրաժեշտ է նաև կազմակերպչական ցուցմունքներ տալ (հիշեցնել յերեխաներին անհրաժեշտ ուսուելիք կամ հագուստ, իրեր, գործիքներ, սանիտարական փաթեթներ վերցնելու մասին և այլն):

### ԵՔՍԿՈՒՐԾԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հանրածանոթ է այն փաստը, վոր ինչպես առաջին դասի, նույնպես և առաջին եքսկուրսիայի կանոնավոր կազմակերպումից շատ բան է կախված, հետագայում նման աշխատանքները հաջող ընթացքով տանելու համար: Այդ իսկ պատճառով եքսկուրսիան հաջող անցկացնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ վորոշ պայմաններ: Ամենից առաջ պետք է խուսափել այն պրակտիկայից, յերբ ուսուցիչն առանց այլևալության յերեխաներին դուրս է բերում բայց յերկնքի տակ: Բնական է, վոր այդպիսի դեպքում մատերիալը դանում է բազմազան, յերեխաների ուշադրությունը դժվար է լինում կենտրոնացնել, այնտեղ ամեն ինչ նրանց համար դանում է գրավիչ, և յեթե այդ բոլորին ավելացնենք ուսուցիչների նախապատրաստությունը տվյալ եքսկուրսիայի համար, ապա անհաջողությունն ակնբախ է: Այդ պատճառով անհրաժեշտ է սկզբնական շրջանում եքսկուրսիաները կազմակերպել դպրոցին

շատ մոտ, կարծատե ժամանակով ու պարզ նպատակադրումով, ապա կամաց-կամաց վարժեցնել ավելի յերկարատե և հեռավոր եքսկուրսիաների՝ նպատակադրելով ավելի բարդ խնդիրներ: Մյուս խնդիրը՝ դա դիսցիպլինայի պահպանման հարցն ե, վորի վրա հենց առաջին որերից պետք ե լուրջ ուշադրություն դարձնել: Առանց դիսցիպլինայի՝ եքսկուրսիան անողութ ե: Իսկ վորապեսզի այդ բոլորը պահպանվի, անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել կազմակերպչական կողմի վրա: Դպրոցից կամ նշված հավաքատեղից դուրս գալիս պետք ե գնալ շարքերով: Այդ անհրաժեշտ ե (Հատկապես քաղաքներում) նրա համար, վոր նախ՝ դիսցիպլինան շի խախտվում, յերկրորդ՝ փողոցի մեծ շարժումը կարող ե վտանգավոր լինել ցրված խմբերի համար: Դուրս գալով դաշտ, անտառ, մարգագետին՝ կարելի յե շարքերը ցրել:

Հասնելով եքսկուրսիայի վայրը՝ ուսուցիչը նախորոք բաժանված տասնյակներին ցուց ե տալիս իրենց աշխատանքների վայրը, հիշեցնում անելիքները (դիտողություններ, միջատների կամ բուկսերի հավաքում, գրանցումներ, շափումներ և այլն) և անցնում աշխատանքի: Դեկավարը հետևում ե յերեխաների աշխատանքին և անհրաժեշտ դեպքում հավաքում ե նրանց՝ նոր ցուցմունքներ տալու, հավաքածներն ընդունելու կամ հանդստանալու նպատակով: Նայած եքսկուրսիայի առարկային՝ եքսկուրսիան վարելու մոմենտները կարող են տարբեր լինել. 1. Յերբ անհրաժեշտ ե լինում ամեն ինչի բացատրությունը տանել ուսուցի՝ զրոյցի ոգնությամբ: Սակայն պետք ե խուսափել այն պրակտիկայից, յերբ այդ անհրաժեշտ զրոյցը վեր ե ածվում բացովյա դասախոսության, վորը ձգձգում ե եքսկուրսիան և ձանձրացնում աշակերտներին: 2. Յերբ ուսուցիչն ընդմիջումներով առաջադրանք ե տալիս աշակերտներին. որինակ՝ հավաքել տերեւներ, միջատներ, զանազան հանածոներ, կամ դիտել վորեւ յերեւոյթ, պարզ գաղափար տալով յուրաքանչյուրի նշանների ու հատկանիշների մասին: Այս բոլորից հետո անհրաժեշտ ե նշել, վոր առհասարակ եքսկուրսիայի ժամանակ հատուկ ուշադրություն պետք ե դարձնել յերեխաների ակտիվ աշխատանքի վրա, վորը զարգացնում ե ինքնուրույնություն, հետաքրքրություն դեպի աշխատանքը, ստեղծում ե նրանց մեջ առույգ ու աշխատավոր տրամադրություն և այլն: Այդ պատճառով ուսուցիչն առհասարակ պետք ե խուսափի գիտելիքների դոգմատիկ հաղորդումից: Նա պետք ե աշխատի՝ վորապան

հնարավոր ե աշակերտներին դնել հետախուզութիւն վերում, վորտեղ քնական յերկույթներին հանդիպելիս՝ նրանց մեջ հղանում են վորոշ մտքեր ու ստիպում են ինքնուրույն կերպով պատասխան մինտել և գտնել:

Այսպիսի աշխատանքն առհասարակ բավականին լարվածություն ե պահպանում աշակերտներից: Դրա համար ել անհրաժեշտ ե այդ աշխատանքները կատարել 40—45 րոպե, ամենաշատը մեկ ժամից վոլ ավել և անհրաժեշտ ընդմիջումներով:

Իսկ յեթե եքսկուրսիան կատարվում ե դեպի վորեւ թանգարան, գործարան, կենդանանոց, այն ել առանց ընդմիջման, առաջ այն պետք ե տեսի ավելի կարգ՝ 20—30 րոպե:

Վերջացնելուց հետո, եքսկուրսիոն վայրից դուրս գալը նույնպես պետք ե կատարել կազմակերպված ձևով, ինչպես գալու ժամանակ: Դեկավարը հավաքում ե աշակերտներին, հաշվի յե առնում, թե ո՞վ ի՞նչ ե արել, կամ ի՞նչ ե հավաքել. կրկնել ե տավիս, թե ո՞վ ի՞նչ ե իմացել. ապա շատ սխեմատիկ կերպով ամփոփում ե արդյունքները (և վոլ թե մանրամասն մշակում, վորը պետք ե կատարի դպրոցում) և կազմակերպում ե վերաբարձր: Վերապահնալով դպրոց՝ անհրաժեշտ ե հոգ տանել պահպանելու հավաքած մատերիալը:

### ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Վորպեսզի եքսկուրսիան վերջնականապես՝ ավարտված համարվի, անհրաժեշտ ե եքսկուրսիայից հետո ուսումնասիրված մատերիալը անպայմանորեն ամփոփել ու մշակել: Այդ մշակումն ու ամփոփումը պետք ե կատարել եքսկուրսիայից հետո հետեւալ ժամին, վորպեսզի յերեխաները թարմ տպավորությամբ ընդհանրացնեն արդյունքները և ամրացնեն ստացված տեղեկությունները:

Այդ ամփոփումն ու ամրացումը կարելի յե կատարել տարբեր ձևերով. 1. յերեխաները կոլեկտիվ պատմում են այն մասին, թե ի՞նչ են տեսել եքսկուրսիայի ժամանակ. դասախոսն լրացնում ե և հանում ընդհանուր յեղակացություն. 2. եքսկուրսիայի ընթացքում տեսածը և դիտածը ուսուցիչը զրոյցի միջոցով ինքն ե ամփոփում. 3. աշակերտները հաշվետվություն են տալիս գրավոր ձևով կամ պատասխանում են ուսուցիչ տված գրավոր հարցերին, վոր պետք ե բղան եքսկուրսիայի եյությունից. 4. գրավոր պատճառով ուսուցիչն առհասարակ պետք ե խուսափի գիտելիքների դոգմատիկ հաղորդումից:

կարել այն, ինչ տեսել են եքսկուրսիայի ժամանակ և յեղափակի գրուցի ընթացքում ոգտագործել այդ նկարները. 5. դպրոցական լաբորատորիայում կամ կարինետում եքսկուրսիայից բերված որյեկտների յերկարատև դիտողականություն. 6. եքսկուրսիայից հավաքած արժեքավոր նյութերը հանձնվում են դպրոցական թանգարանին կամ լաբորատորիային՝ հետագայում՝ դասարանական աշխատանքում ոկտագործելու համար:

Եքսկուրսիայի ամփոփումից և ամրացումից հետո անջրաժեշտ է աշակերտների միջոցով նկարել տալ այն, ինչ տեսել կամ ուսումնասիրել են (գործարան, բանջարանոց, ջրամբար, անտառ, պուրակ, կենդանիներ, տերևներ, ծաղիկներ և այլն): Բացի նոր կարիներից՝ կարելի յէ պատրաստել տալ զանազան մակետներ (բանջարանոցի, ծաղկանոցի, յերկրաբանական վլվածքների և այլն): Իսկ վորոշ նյութերից կարելի յէ կազմել կոլեկցիաներ, հերթարիումներ և պրեպարատներ (զանազան ծաղիկների, տերևների, սերմերի, ցողունների, պտուղների, ջրաբույսերի կամ զանազան վնասատուների՝ դաշտի, այգու, բանջարանոցի, անտառի զանազան միջատների, ջրային խեցիների և այլն):

Ննդնաստինքան հասկանալի յի, վոր վերեռում թվարկված աշխատանքների մեծ մասը պետք է կատարել արտադասարանական պարապմունքների ժամանակ, ուսուցչի անմիջական ղեկավարությամբ:

### ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Յուրաքանչյուր բնագիտական եքսկուրսիայի համար անջրաժեշտ են զանազան եքսկուրսիոն պարագաներ, վորոնք պետք է լինեն բնագիտական կարինետներում, հակայն նժանցից մեծ մասը կարելի յէ պատրաստել տալ նաև աշակերտների միջոցով:

Բուսաբանական և կենդանաբանական եքսկուրսիաների համար անջրաժեշտ են հողատեր, մատիտ, ռետին, փաթթաթեր (ծրաբներ) սերմերի համար, արկղ, դանակ, փոքրիկ կացին, բույսերի համար պատպահ, թել, խոշորացուց, բոնիչ, ջրաբույսերի համար անոթ, յերկար փայտ՝ կեռով, ջրային ցանց, բանկա, պընակ, բաժակ (մանր որյեկտներ հավաքելու համար), միջատաբանական փորձանոթներ, ողային ցանց (մառլայից), մեռցնող բանկա, խլորոֆորմով կամ յեթերով ծծված բամբակ, պինցետներ և այլն:

### 5. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՑՈՒՆԸ ԴՐՈՌՑՈՒՄ

Բնագիտության դասավանդման ընթացքում, հատկապես «կենդանիներ» բաժինն անցնելիս, կենդանի անկյան կազմակերպումը հսկայական ոգնություն կարող է ցուց տալ ուսուցչին. Դասի կամ եքսկուրսիայի ժամանակ կենդանի որյեկտի վրա կատարած դիտողությունները լինում են կարճատես. — այդ ժամանակամիջոցում յերեխաները կարող են դիտել և ուսենել կենդանու, բույսի արտաքին կազմությունը, շարժումները և կյանքի առանձին եպիզոդները, սակայն նրանց կյանքի ընթացքի լրիվ ուսումնասիրությունը՝ շարժվելու հարմարանքները, սնվելը, վորսը, բացմացումը, աճումը՝ հնարավոր և տեսնել միայն յերկարատև դիտողության, փորձադրման և ուսումնասիրության ժամանակ՝ կենդանի անկյունում: Յերեխաները մեծ սիրով ու հետաքրքրությամբ են աշխատում կենդանի անկյունում: ոգնում են ուսուցչին հարցստացնելու անկյունը կենդանի որյեկտներով, ինամում և մեծ բավականությամբ նշում յուրաքանչյուր փոփոխություն: Այս աշխատանքը յերեխաների մոտ զարգացնում է՝ դիտողական, աշխատանքային և կազմակերպչական ունակություններ, բարձրացնում և պատասխանատվության զգացմունքը, դաստիարակում և վարքը և կոլեկտիվիտական գծերը:

Աշխատելով կենդանի անկյունում՝ յերեխաները շատ արժեքուոր կիտելիքներ են ձեռք բերում իրենց հետազ գործնական աշխատանքների համար: Նրանք սովորում են, թե կյանքում ինչպես պետք է խնամքն ճագարներին, հավերին, ինչպես և վորժամանակ պետք է պայքարեն այգու, բանջարանոցի վնասատուների դեմ, վոր թուշուներն են մեզ ուժակար և այլն:

Սյսպիսով կենդանի անկյան կազմակերպումը դպրոցում վոր միայն լրացնում և ամրացնում է դասի ընթացքում տրված դիտելիքները, այլև զարգացնում է յերեխաների մեջ արժեքավոր կրթա-դաստիարակչական գործնական ունակություններ:

Հակայն պետք է նշել, վոր կենդանի անկյունը մեր դպրոցներում չի գրավում իր արժանի տեղը: Աչքի յէ ընկնում մի շատցավալի յերեկովթ, վոր մեր նոր կառուցված դպրոցները շոնեն սենյակներ, վորտեղ կարելի լիներ պահել և աճեցնել կենդանի անկյանը անջրաժեշտ որյեկտները: Ճիշտ է, զատ դպրոցների ըստամուտներում, միջանցքներում դրված են լինում ծաղկամաններ տարբեր բույսերով, սակայն դրանք ունեն միայն դեկորա-

տիկ արժեք և յերբեք չեն ձեռք բերվում և ոգտագործվում զորպես կենդանի որյեկտներ՝ ուսումնասիրության նպատակով: Բացի այս՝ աշքի յե ընկնում մի հանգամանք ևս. լավագույն դեպքում, յերբ դպրոցում կազմակերպվում ե կենդանի անկյուն, նրա ոգտագործումը տարվում է անսխատեմ, մի սեղոնում աշխատանքն աշխուժանում է (գարնան, աշնան), մյուս սեղոնում բոլորովին կանգ է առնում (ձմռան):

Վերեկում նշված ձևով կենդանիանակյան ճիշտ կազմակերպումն ու ոգտագործումը բնագետ մանկավարժի աշխատանքին մեծապես կնպաստի:

## 6. ԴՐՈՑԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ

Յեթե դպրոցն ունի դպրոցամերձ հողամաս, ապա բնագետ դասատվի համար այն կարող է հանդիսանալ փորձնական լաբորատորիա, վորտեղ հիանալի կերպով կարելի յե կազմակերպել քացովիչ դաս, դիտողություն կամ վորոնե փորձի դրում:

Դպրոցամերձ հողամասում կազմակերպված յերկարատև դիտողությունները յերեխաներին ծանոթացնում են բույսերի աճման ու զարգացման, ինչպես նաև վորոշ կենդանիների, միջատների կյանքին ու առանձնահատկություններին: Դպրոցամերձ հողամասում աշխատելիս աշակերտի մեջ ավելի հեշտությամբ, քան վորեվե աշխատանքի դեպքում, զարգանում է դեպի բնությունն ու բնական յերևությ իրական, վոլ հայեցողական մոտեցում: Աշակերտը գործնականում համոզվում է մարդու ներգործությանը բնության վրա, բույսերի և կենդանիների փոփոխվելուն մարդու ձեռքով, նա տիսնում է, որինակ, մարդն ինչպե՞ս է բարձրացնում բանցարանոցի կամ զանազան կուտուրական բույսերի բերքատվությունը և այլն:

Յերկարատև աշխատանքը դպրոցամերձ հողամասում յերեխաների մեջ զարգացնում է սեր դեպի ինքնուրույն աշխատանքը, ինքնագործունեցություն և հետազոտական ունակությունները: Իսկ աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում յերեխաներն ստանում են նաև ֆիզիկական դաստիարակություն:

Այսպիսով դպրոցամերձ հողամասի ճիշտ ոգտագործումը աշակերտների ապագա գործնական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ կտա զգալի արդյունք:

## 7. ԿԻՆՈՅԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կինո ուսուցման աշխատանքը յերեխաների հետ (վոր առաջ տարվում եր մասսայական կինո դասախոսությունների միջոցով՝ ակումբներում ու կինո-սրահներում՝ կտրված դպրոցից ու մանկավարժից), այժմ կամաց-կամաց տեղ է գտնում մեր դպրոցներում: Վոլ մի դիտողական մատերիալ, վոր հայտնի յե դպրոցին, — դիապորդիտիվներ, նկարներ, պլակատներ և այլն, — շրջապատկերում բնադիտական յերևույթներն այնպիսի հարստությամբ, այնպիսի ուժեղ տպագորությամբ ու զբաղեցնող ուժով, ինչպիսին կինոն ե: Նկարները, դիապորդիտիվները, մուլյաժները, բնագիտական ոբյեկտների մասին տալիս են բավականին լավ պատկերացում, սակայն այդ ոբյեկտները պատկերում են անշարժ վիճակում, լավագույն դեպքում՝ շարժման մեկ մոմենտում: Ընդհակառակն, կինոն ցույց է տալիս ոբյեկտների և բնական յերևույթների բնական դիրքի շարժումը՝ զրկեցի թափվելը, թըռչունների թռիչքը, կենդանիների շարժումը, հանքերի մշակումը, արդյունաբերության բնական պրոցեսները, ծովի հատակի կենդանիների կյանքը, մեր կոլխոզային դաշտերը, նոր կովտուրաների մշակումները և այլն:

Աշակայն պետք է նշել, վոր այն, ինչ հնարավոր է ուսուցանել մեղ հայտնի մեթոդներով, — ցուցադրական փորձ, լաբորատոր աշխատանք, եքսկուրսիա, կենդանի անկյուն և այլն, փորտեղ յերեխան. ինքն է շոշափում, տեսնում, զգում իր զգայարաններով, — կարիք չկա կինո նկարներ ցուցադրել: Սակայն սրանով չի սպառվում կինոյի ոգտագործման դերը: Գոյություն ունեն պըրոցեսներ, վոր կատարվում են դանդաղ, աստիճանական զարգացմանը, և հնարավոր չե դպրոցական պայմաններում դիտել: Հենց այդ պըրոցեսները կինոն կարող է ցուցադրել մի քանի ըուեցի ընթացքում. որինակ՝ եկրանի վրա կարելի յե ցույց տալ ապառների քայլացումը, աղի առաջացումը, սերմերի աճումը, պտուղների հասումացումը, ոգտակար հանածոների հանույթը, ստորերկոյա և մակերեսային զրերի աշխատանքը, քարածուխի առաջացումը, տորֆի առաջացումը, նավթի մշակումը և այլն:

Կինո-ֆիլմը հիմնականում պետք է տա այն մատերիալը, վորն անհնար է ցուցադրել դպրոցական պայմաններում: Ցուցադրվող ֆիլմը յերեխաներին պետք է տա վորոշակի գիտելիք-

Ներ, վոր նշված են տվյալ դասարանի ծրագրում. Հետեապես նշառդանապես պետք է կապված լինի նյութի ընտրության, դասի պլանի, նրա կազմության ու մեթոդական պահանջների հետ: Կինոն չպետք է փոխարինի ուսուցչին, այլ պիտի դառնա նրա ողականը:

Դպրոցական փորձերը ցուց են տալիս, վոր կինո-նկարների 10—15 րոպեյի ցուցադրումը շատ ավելի լավ է յուրացնելի դարձնում տրվելիք մատերիալը, քան դասի 40—45 րոպեյի զբուցը և, վոր գլխավորն ե, յուրացումը լինում է շատ ավելի հիմնական ու խոր՝ վոչ միայն առաջավորների, այլև յետ մնացողների կողմից: Բացի այս՝ կինո դիտումները լայնացնում են յերեխաների մտահորիզոնը, հետաքրքրություն են զարթնեցնում դեպի բնական պրոցեսներն ու յերեսությունները: Սրան ավելացրած և այն, վոր յերեխաների կողմից կինո նկարը դիտվում է շատ մեծ բավականությամբ, և ամենաշոր, դժվար հասկանալի և ձանձրակի ուսումնական նյութը կինո նկարի գործադրման շնորհիվ դառնում է մատչելի ու գրավիչ:

Այս բոլորից յերեսում ե, թե վորքան արժեքավոր է կինո դասերի կազմակերպումը դպրոցներում. և զարմանալի չե, վոր մեր մանկավարժների ստվար մասը ձգտում է տիրապետելու կինո դասի միթողիկային:

Կինո-նկարների ցուցադրումը կարելի յե կատարել յերեք ձևով. 1. կինո-սեանս, 2. կինո դասախոսություն, 3. կինո դաս:

1. Կինո-սեանսը սովորական նկարի ցուցադրումն ե, վիրտեղ ուսուցչի ակտիվությունը շատ աննշան ե: Ուսուցիչը լավագույն դեպքում կարող է բարձրածայն կարդալ գրանցումները կամ յերեխաների հարցումներին տալ վորոշ պատասխան: Սկզբնական շրջանում, յերբ մանկավարժն սկսում է աշխատել կինոդիմերի ոժանդակությամբ, ցուցադրումները պետք ե կատարվեն ամենապարզով: Այս տիպի աշխատանքին նախապատրաստվելն առանձնապես բարդ չե, միայն անհրաժեշտ է նախարորդ դիտել տվյալ նկարը, կատարել նշումներ, թե վո՞ր դասի և ինչպիսի մոմենտների հետ ե ծանոթացնում այդ նկարը, ու ժամանակին ապահովել ցուցադրումը: Այսպիսի ցուցադրումներին կարելի յե մասնակից դարձնել յերկուակաց-յերեք գուգընթաց դասարաններ:

2. Կինոդիտումների ավելի կատարելագործված ձևը կինոդասախոսությունն ե, վոր տարվում ե սովորական դասի ընթացքով, այսինքն՝ սկսվում ե ուսուցչի նախարանով և վերջանում յեղրափակիչ դրուցով: Ներածականի ժամանակ ուսուցչի յերեխաներին ծանոթացնում ե ծրագրային այն նյութին, վոր կինոնկարի դիտման ժամանակ պետք է տեսնեն և յուրացնեն: Կինոնկարի դիտումից հետո ուսուցիչը կազմակերպում է յեղրափակիչ զրուցը, վորի ժամանակ ամփոփում ու ամրացնում է՝ այն մատերիալը, ինչ տեսել ելին այդ մոմենտին: Այս դեպքում դասատվից պահանջվում է նախապատրաստական ավելի մեծ աշխատանքան առաջին դեպքում:

3. Կինոդիտումների ավելի բարձր ձևը կինո-դասն ե, յերբ կինո-նկարը հանդես է գալիս, վորպես դիտողական նյութ: Փորձերը ցուց են տալիս, վոր կինո-դասը կարելի յե ուսուցործել վորպես սովորական դաս, վոր իր մեջ պարփակում է այն բոլոր պահանջները, ինչ ընդունված է առհասարակ դասի ժամանակ. այսինքն՝ այն պետք է լրիվ շափով համապատասխանի տվյալ թեմայի անցնելիք նյութին, պետք ե կատարվի ժամային խիստ պլանավորմամբ և համապատասխան մեթոդական կառուցումով, ուսուցչի պատմելով, ֆիլմի ցուցադրմամբ, ամփոփիչ զրուցով, տնային աշխատանքի հանձնարարությամբ և համապատասխան գրանցումով: Առանց այս պահանջների լրիվ կիրառման՝ կինոդասը վեր է ածվում կինո-սեանսի և կորցնում է իր արժեքը: Այսպիսի դասը կատարված է հատուկ սարքավորված կինո լարութառորդիայում, վիրտեղ պետք է առկա լինեն բոլոր հարմարությունները:

Դասն սկսվում է մանկավարժի ներածական զրուցով, վորի ժամանակ դասատուն հարցերի միջոցով վեր ե հանում յերեխաների դիտելիքները տվյալ նյութի շուրջը, ապա ամբողջացնում է անցնելիք թեման և կապում կինո դասի հետ, սակայն չի պատմում կինոյի բովանդակությունը: Անցնելով ցուցադրմանը, դասատուն բացարություն ե տալիս վատ յերեսացող պատկերների, շնակացվող մտքերի ու անծանօթ տերմինների մասին, յերեխաների ուղարկությունն ե բևեռում այն անհրաժեշտ մոմենտների վրա, վոր կարող եր վրիպել նրանց ուշադրությունից և սովորի տակ մնալ:

## 8. ԳԱՍՏԻՐՔԸ, ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳԾԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Դասագիրքը դպրոցական կյանքում գրավում է իր պատշաճ տեղը: Դասագիրքը այն պարագան է, վորի մեջ հավաքագրված են այն գիտելիքները, վոր դարերի ընթացքում կուտակել ե գիտությունը: Պատրաստվելով դասին, ուսուցիչը սկզբից պետք է լավ ծանոթ լինի դասագրքի մեջ տրված բնագիտական գիտելիքների ծավալին, վորպեսզի յուրաքանչյուր դասի նյութը: Ամրացվում է՝ ինչպես սովորական դասը, կատարվում անհրաժեշտ գրանցում և հանձնարարվում տնային աշխատանք (համապատասխան հոդվածը կարդալ կամ տեսած որյեկտուները նկարել): Այսպիսի դասի հաջող ընթացքի համար անհրաժեշտ է ուսուցչի լուրջ նախապատրաստական աշխատանքը, այն է՝ ընտիել անհրաժեշտ ֆիլմ, դիտել նրան մեկ կամ մի քանի անգամ, և վերջապես կազմել դասի պլանը իր բոլոր մոմենտներվ:

Բացի այս ձևերից՝ կինո-նկարը կարելի յե ոգտագործել նաև վորպես եքսկուրսիոն մատերիալ: Այն դպրոցները, վորոնք համարավորություն չունեն լինելու արդյունաբերական վայրերում, կենդանաբանական թանգարաններում, կենդանանոցներում, թռչնաբուծարաններում և այլն, կարող են այդ բացը լրացնել կինո նկարների ոժանդակությամբ: Ի հարկե այդ շատ հեռու կլինի կենդանի որյեկտի անմիջականորեն դիտելու արժեքից, բայց և այսպես լրիվ շափով կոժանդակի խորացնելու ու լրացնելու այդ ուղղությամբ ունենալիք անհրաժեշտ գիտելիքները:

Վորոշ կինո-նկարներ կարելի յե ոգտագործել նաև սովորական եքսկուրսիա կատարելուց հետո, վորի նպատակն է ստացված գիտելիքներն ավելի ամրացնել, լայնացնել և խորացնել: Որինակ, յերբ եքսկուրսիա յենք կատարել դեպի գործարան՝ մեղ անգամ դիտելով այն, յերբեք յերեխաների համար լրիվ շափով չի պարզվի նրա եյությունը: Մինչդեռ նույն արտադրության պրոցեսը պատկերող կինո-ֆիլմի դիտումը կրացնի ու կամբողջականացնի այն բոլորը, ինչ ստացել են եքսկուրսիայի ժամանակի: Յերեքմն ել գործադրվում է այն ձեզ, յերբ նախքան եքսկուրսիա գնալը ցուցադրվում է համապատասխան նկար:

Դասագիրքը դպրոցական կյանքում գրավում է իր պատշաճ տեղը: Դասագիրքը այն պարագան է, վորի մեջ հավաքագրված են այն գիտելիքները, վոր դարերի ընթացքում կուտակել ե գիտությունը: Պատրաստվելով դասին, ուսուցիչը սկզբից պետք է լավ ծանոթ լինի դասագրքի մեջ տրված բնագիտական գիտելիքների ծավալին, վորպեսզի յուրաքանչյուր դասի նյութը: Ամրացվում է՝ ինչպես սովորական դասը, կատարվում անցնելիք թեմայի բովանդակությունը:

Դպրոցական պրակտիկան ցուց է տալիս, վոր դասագիրքը տարբեր ուսուցիչների մոտ ոգտագործվում է տարբեր ձեվով: Կան ուսուցիչներ, վորոնք դասագրքին տալիս են բացառիկ գեր, իսկ եքսկուրսիոն աշխատանքը, վորձերը, գիտողականությունը, գործնական աշխատանքները գրավում են յերկրորդական տեղ: Նրանց մոտ դասավանդման հիմնական մեթոդը հանդիսանում է «բացատրական ընթերցանությունը», վորի ընթացքում աշակերտները հերթականորեն բարձրածայն կարդում են համապատասխան հոդվածը, իսկ դասատում զուգընթաց տալիս է անհրաժեշտ բացատրություն: Այս դեպքում դասագիրքը հանդիսանում է ուսուցման հիմնական աղբյուրը: Կամ՝ դասատում պատմում է տվյալ դասի բովանդակությունը և դասի վերջին հանձնարարում աշակերտներին տանը կարդալու այսինչ եղից մինչև այնինչ եղը: Սակայն այս մեթոդի կիրառման ընթացքում աշակերտին դժվար է յուրացնել և հիշեցնել անցած նյութի բովանդակությունը, քանի վոր նա գործնականում չի տեսել, շոշափել կամ դիտել առարկաներն ու յերեկությը, վորոնց մասին կարդացել է գործում կամ լսել ուսուցչից:

Ակներեվ ե, վոր վորձված դասատում, վորը ճիշտ է հասկացել բնագիտության դասավանդման ինդիբները և լավ է տիրապետում մեթոդիկային, դասագիրքն ոգտագործում է վորպես անցածի ամրացման հիմնական միջոց: Այդ՝ պրակտիկայում գործադրվում է հետեվյալ կերպ: — Նյութն անցնելով եքսկուրսիաների, ցուցադրական փորձի, լաբորատոր աշխատանքի և դիտողությունների միջոցով՝ դասագիրքն ոգտագործում է վորպես կանոն դասի վերջին, յերբ անհրաժեշտ է անցածն ամփոփել ու ամրացնել: Այսպիսով աշակերտը նախքան դասագրքի այս կամ այն հոդ-

վածը՝ կարդալը՝ արդեն նախապատրաստված եւ այն հանկանալու համար: Որինակ՝ փորձի ոգնությամբ աշակերտն իմանում եւ մետաղ-ների հատկությունների մասին, ապա ուսուցչի հանձնարարությամբ տանը, դասագրքում կարդում եւ այդ հատկությունների մասին: Այս մեթոդով յերեխաներին լրիվ շափով մատչելի կլինի դասագրքի բովանդակությունը: Նա տպագրված հեղինակավոր ե-չերից կիմանա, վոր այն գիտելիքները, վորին ինքը մի քիչ առաջ հասավ, գիտության կողմից վաղուց հայտաբերված յերեվութիւն:

Դասագրքի հետ միասին դասատուն անհրաժեշտաբար պետք եւ ոգտագործի նաև լրացուցիչ գրականություն, վորն ուսուցչի հա-տուկ ընտրությամբ կարելի յէ կամ դասարանում կարդալ, կամ հանձնարարել աշակերտներին տանը կարդալու:

Բացի դասագրքից՝ բնագիտության դասին անհրաժեշտ ե ոգտագործել նաև գրանցումներն ու զծագրումները: Գծագրության, նկարչության միջոցով յերեխան վոլ միայն նոր ստացած գիտելիքներն ամրացնում եւ իր հիշողության մեջ, այլև ծանո-թանում եւ նոր յերեվույթների և որյեկտների արտաքին տեսքին:

Խոշոր նշանակություն ունի գծագրման, նկարչության այն տեսակը, վոր կոչվում ե «ֆիկսացիա»: այդ ժամանակ նկարչությունը ներկայացնում ե մի պարզեցրած սխեմա, վոր կատարում են աշակերտները ուսուցչի նկարածին զուգընթաց: Այս նկարներին տրվում են նաև բացատրական գրանցումներ, վոր արտա-գրվում են աշակերտների տեսրերում:

Ուսումնամասիրությունները ցուց են տվել, վոր շատ հաճախ ուսուցչի ձեռքով գրատախտակի վրա կատարված նկարը, վոր աշակերտներն արտանկարում են իրենց տեսրերում, մանկավարժորին ավելի արժեքավոր ե, քան պատրաստի գեղարվեստական նկարներն ու աղյուսակները: Այդ բացատրվում ե նրանով, վոր այս գեպքում գիտելիքների յուրացումը կատարվում ե յերկու կարեվոր գրգիռների՝ ձայնի ընկալման և տեսողության միջոցով: Այսպիսի գծագրումներն ու նկարները պետք ե կատարվեն աշա-կերտների տեսրերի մեջ, վորոնց, ինչպես ասացինք, զուգակ-ցվում են համառոտակի գրանցումներ: Սակայն պետք ե նշել, վոր այդ գրանցումները չպետք ե պատահական բնույթ կրեն, այլ ուսուցչի կողմից ինամքով ու մտածված ձեվով, նախորոք դասին:

պատրաստվելիս պետք ե մշակվեն, վորպեսզի ըստ հնարավորին լինեն լրիվ, կոնկրետ, կարճ և հիշողության համար հեշտ:

Յերբեմն գրանցումները չեն զուգակցում վորեվե նկարի կամ գծագրության, այլ ուղղակի արտահայտում են անցած դասի կարեվոր կետերը, վոր պետք ե միտքը պահել:

Ուսուցիչը պետք ե գրանցման և գծագրման տեսրերին խո-շոր նշանակություն տա, վորպեսզի աշակերտներն ել իրենց հերթին լուրջ մոտեցում ունենան դեպի այդ աշխատանքները: Դրա համար անհրաժեշտ ե, վոր ուսուցիչը սիստեմատիկաբար նայի, ուղղի և գնահատի այդ տեսրերը:

Ուսուցչի խնամատար ղեկավարությամբ, հատկապես ցածր դասարաններում, գրանցման և գծագրման տեսրերը կտան պա-հանջված արդյունքները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պավլովիչ.** — «Практика преподавания естествознания в начальной школе».

2. **Ягадовский.** — «Практические занятия по естествознанию в начальной школе».

3. **Боровицкий.** — «Методика естествознания».

4. «Методическое пособие для учителя начальной школы в IV классе», под редакцией Н. К. Гончарова.

5. **И. И. Полянский.** — «Ботанические экскурсии».

6. «Ученные записки естествознания».

7. «Школьно-учебный фильм», сборник статей под редакцией Переса.



30382

Арм.

3-1598<sub>a</sub>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն . . . . .	3
2. Ցուցադրական փորձ . . . . .	5
3. Յերեխաների ինքնուրավուն լաբուատոր աշխատանքը .	10
4. Նոր գիտելիքների հաղորդում նկարների, մուլյաժների, չոր և բաց պրեզարատների միջոցով . . . . .	16
5. Գպրոցական եխսկուրսիա . . . . .	22
6. Կենդանի անկյունը՝ դպրոցում . . . . .	31
7. Գպրոցամերձ հողամասը . . . . .	32
8. Կինոյի օգտագործումը բնագիտուրյան դասավանդման ընթացքում . . . . .	33
9. Դասագիրքը, գրանցումներն ու գծագրումները բնագի- տուրյան դասին . . . . .	37

Պատ. Խմբագիր՝ Մ. ԶԱՐԱՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝ Հ. ԱՅՎԱՋՅԱՆ

Սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Վ. 673, պատուիր № 645. ալիքամ 1000

Ц 1940 թ.  
Акт № 548  
Вкладн. л.

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից քերպերի և ամսագրերի տպարան, Յերևան,